Sans que l'objet présent l'irrite et le redouble.

SÉVÈRE

Fabian, je la vois.

ՍԵՒԵՐՈՍ

Չէ ինչ փոյթ ։

ՓԱԲԻԱՆՈՍ

Այնու եւ եւըս խըստասցին դըժուարընդել ցաւք հոգւոյդ ։

ՍԵՒԵՐՈՍ

Եւ ոչ իմ այն են կամք բուժել թէ 'ի ցաւոց ցանկացայց ·
Այլ տեսանել եւեթ ըզնա, անձկաւ նորին թող մեռայց ։

ՓԱԲԻԱՆՈՍ

Այլ 'ի տեսիլ նորին չիցես ոչ եւս անձին քում իշխան ·
Յուսակորոյս սէր չըգիտէ ոչ եւս զօրէն եւ զարժան ·
Ըզխանդակաթ խօսիցն ըզհետ 'ի կրիցն անկեալ 'ի հրապոյր,
Տայ ըզլեզուն 'ի թըշնամանս եւ զանիծից ժայթքէ հուր ։

ՍԵՒԵՐՈՍ

Այլազգ զինէն կարծիք են քեզ․ նա մեծարոյ է ինձ դեռ ·
Սիրտ իմ թէպէտ եւ յուսահատ, վառ 'ի նորին է 'ի սէր ·
Եւ ի՞ւ իւիք մարթ իցէ զնա յանդիմանել անիրաւ ·
Ընդ ո՞ր մեղաց դատել՝ երբ չիք նորին խոստումն ինձ 'ի գրաւ ·
Ոչ յեղյեղուկ գըտաւ երբէք, ոչ երդմնազանց ըստ հարկին ·
Պատշաճք պարտուցն եւ հայր նորա եւ բաղդն իմ ինձ նենգեցին,
Բայց եւ արդար պարտք իւր էին եւ իրաւունք հօր նորա ։
Իմոց բնաւից չարեացապարտ է միայն բաղդն իմ դըժնեայ ·
Թէ նուազ ինձ բաղդն իմ յաջողէր, այլ փոքըր մի վաղագոյն,
Միով ըզմիւսն ածեալ յիմ կամս, պահէր ըզսէրն ինձ նորուն ·
Յոյժ երջանիկ, այլ տարաժամ բաղդիւս՝ յինէն նա կորեաւ ·
Թող ինձ ապա, տեսից ըզնա, անձկումն եղէց կենաղըաւ ։

ՓԱԲԻԱՆՈՍ

Այո, երթայց ասել նըմա զի եւ յաղէտըդ յետին
Է զօրութիւն դեռ եւս 'ի քեզ մարտընչելոյ ընդ անձին ։
Խիթայ եւ ինքն իսկ 'ի նախկին թափոյ վըշտին դըրդմանէ,
Զոր յեղակարծ կորուստ 'ի սիրտ սիրեցողին արկանէ,
Ոյր բըռնութիւն շատ է յուզել վըրդով յոգի վըշտակիր
Առանց գալոյ եւ սիրելոյն տեսլեամբ եւ եւս 'ի գըրգիռ ։

ՍԵՒԵՐՈՍ

Նա ինքն ահա, փարիանէ ։

FABIAN

Seigneur, souvenez-vous...

SÉVÈRE

Hélas! elle aime un autre, un autre est son époux.

SCÈNE II.

SÉVÈRE, PAULINE, STRATONICE, FABIAN.

PAULINE

Oui, je l'aime, Sévère, et n'en fais point d'excuse;
Que tout autre que moi vous flatte et vous abuse,
Pauline a l'âme noble, et parle à coeur ouvert.
Le bruit de votre mort n'est point ce qui vous perd;
Si le ciel en mon choix eût mis mon hyménée,
A vos seules vertus je me serais donnée,
Et toute la rigueur de votre premier sort
Contre votre mérite eût fait un vain effort;
Je découvrais en vous d'assez illustres marques
Pour vous préférer même aux plus heureux monarques:
Mais puisque mon devoir m'imposait d'autres lois,
De quelque amant pour moi que mon père eût fait choix,
Quand à ce grand pouvoir que la valeur vous donne
Vous auriez ajouté l'éclat d'une couronne,
Quand je vous aurais vu, quand je l'aurais haï,
J'en aurais soupiré, mais j'aurais obéi,
Et sur mes passions ma raison souveraine
Eût blâmé mes soupirs, et dissipé ma haine.

SÉVÈRE

Que vous êtes heureuse! et qu'un peu de soupirs
Fait un aisé remède à tous vos déplaisirs!
Ainsi, de vos désirs toujours reine absolue,
Les plus grands changements vous trouvent résolue;
De la plus forte ardeur vous portez vos esprits
Jusqu'à l'indifférence, et peut-être au mépris;
Et votre fermeté fait succéder sans peine
La faveur au dédain, et l'amour à la haine.

ՓԱԲԻԱՆՈՍ

Յուշ լիցի քեզ, Տէր, յիշեա…

ՍԵՒԵՐՈՍ

Երդուկ լինել, զայլ ոք սիրէ, այլ ոք նորին է փեսայ:

ՏԵՍԻԼ Բ.

ՍԵՒԵՐՈՍ, ՊԱՒԼԻՆԷ, ՍՏՐԱՏՈՆԻԿԷ, ՓԱԲԻԱՆՈՍ

ՊԱՒԼԻՆԷ

Այո, զայլ ոք սիրեմ, Սեւեր, ոչ թանգուցեմ իսկ զայն քեզ.
Շրնթեն քեզ այլք եւ փաղաքուշ բանիւք խաբեն, այլ ոչ ես.
Պաւլինեայ սիրտն ազնուախոհ քեզ հոլանի է ահա:
Ոչ զոր կարծես՝ մահուդ շռինդն աղէտաբեր այն քեզ կայ.
Եթէ երկինք իմ փեսային զիս առնէին ընտրող տէր,
Քեզ միայնոյ առաքինուդ Պաւլինէ զանձն ընծայէր.
Եւ բաղդն ոսոխ 'ի յիւրն համայն զինեալ 'ի ժլատ խըստութիւն,
Ի զուր ընդդէմ քոյ արժանեաց թափեալ ըզջան գործէր գուն.
Շատ իսկ 'ի քեզ նըկատեալ տիպս առաքինի լաւութեանց,
Նախամեծար առնէի զքեզ եւ արքայից վեհազանց.
Բայց զի պարտուց պատշաճք օրէնս այլազգ առ իս սահմանեն,
Զոր ոք եւ հայրն իմ հրամայէր ընտրեալ փեսայ ինձ յիւրմէն,
Թէպէտ 'ի փառս իշխանութեանդ, որ արութեանց քոց է անկ,
Զարքունական թագին ճաճանչ յաւելուիր եւ զպարծանք,
Թէպէտ սիրով քեզ կըցորդեալ, թէպէտ ըզմիւսն ատէի,
Լուռ 'ի հառաչ յոգւոյ հանեալ, բայց հրամանացն անսայի,
Եւ տարփանաց խանդից սըրտիս բանն յիս գոլով գերազանց,
Ըզհառաչանս լռեցուցեալ՝ առելութեան դընէր սանձ:

ՍԵՒԵՐՈՍ

Ո՜հ, երանի՜ քեզ, զի թեթեւ ինչ հառաչանք 'ի սըրտէ,
Ցաւոց հոգւոյդ ամենայնոյ բաւեղանի պատրաստէ.
Ա՞յդպէս ուրեմն ըղձից սըրտիդ ամենիշխան դու դըշխոյ
Դըժուարընդել կըրից 'ի քեզ փոփոխմանց գոս 'ի վերոյ.
Սիրաբորբոք բոց 'ի քոյին վառեալ 'ի սիրտ եւս քան զեւս,
Կաս դու անխըռով իբր անզգայ, արհամարհոտ իսկ թերեւս.
Եւ անսասան քո պընդութեան թեթեւ թըւի եւ ընդել
Ըզմեծարանս յանարգութիւն, եւ զաեք 'ի քէն փոխարկել:

Qu'un peu de votre humeur ou de votre vertu
Soulagerait les maux de ce coeur abattu!
Un soupir, une larme à regret épandue
M'aurait déjà guéri de vous avoir perdue;
Ma raison pourrait tout sur l'amour affaibli,
Et de l'indifférence irait jusqu'à l'oubli;
Et, mon feu désormais se réglant sur le vôtre,
Je me tiendrais heureux entre les bras d'une autre.
O trop aimable objet, qui m'avez trop charmé,
Est-ce là comme on aime, et m'avez-vous aimé?

PAULINE

Je vous l'ai trop fait voir, seigneur; et si mon âme
Pouvait bien étouffer les restes de sa flamme,
Dieux, que j'éviterais de rigoureux tourments!
Ma raison, il est vrai, dompte mes sentiments:
Mais, quelque autorité que sur eux elle ait prise,
Elle n'y règne pas, elle les tyrannise;
Et, quoique le dehors soit sans émotion,
Le dedans n'est que trouble et que sédition:
Un je ne sais quel charme encor vers vous m'emporte;
Votre mérite est grand, si ma raison est forte:
Je le vois encor tel qu'il alluma mes feux,
D'autant plus puissamment solliciter mes voeux
Qu'il est environné de puissance et de gloire,
Qu'en tous lieux après vous il traîne la victoire,
Que j'en sais mieux le prix, et qu'il n'a point déçu
Le généreux espoir que j'en avais conçu.
Mais ce même devoir qui le vainquit dans Rome,
Et qui me range ici dessous les lois d'un homme,
Repousse encor si bien l'effort de tant d'appas,
Qu'il déchire mon âme, et ne l'ébranle pas.
C'est cette vertu même, à nos désirs cruelle,
Que vous louiez alors en blasphémant contre elle:
Plaignez-vous-en encor; mais louez sa rigueur
Qui triomphe à la fois de vous et de mon coeur,
Et voyez qu'un devoir moins ferme et moins sincère
N'aurait pas mérité l'amour du grand Sévère.

SÉVÈRE

Ah! madame, excusez une aveugle douleur
Qui ne connaît plus rien que l'excès du malheur:

Մասն ինչ յանկարծ քոյդ բնութե՛ն կամ թէ արդեօք լռութե՛ն
Եթէ սփոփէր ըզլըքելոյս սիրտ յաղխիցս անսպառման ,
Հառաչ մի լուռ եւ արտասուաց շիթ մի յաչաց թէ հոսէր ,
Վա՛ղ բըժըշկէր ըզզըրկելոյս ՚ի քէն ըզսիրտ կարեվէր .
Բանն յիս ՚ի կամս իւր նըւաճէր ըզսէրն անկեալ ՚ի յուժոյ .
Եւ զոր ըզգայրն իւր անըզգայ հանէր իսկ զայն ՚ի յուշոյ .
Ապա եւ իմ քոց տարփանաց բերեալ նախանձ աստըւածն ,
Երանեցից զանձն իմ գըգուեալ ՚ի ծոց սիրոյ օտարին :
Ո՛վ դու սըրտիս սէր ցանկալի , որ զիս ՚ի գեղ քո հարեր ,
Ա՛յդ սիրելոյ լցեն օրէնք , եւ բնաւ դու զիս սիրեցե՞ր :

ՊԱՒԼԻՆԷ

Շատ իսկ ցուցի քեզ զայն , Սեւեր , եւ թէ կարող ինչ էի
Նա եւ զբոցոյն խարոյկ ՚ի սպառ շիջուցանել ՚ի սըրտի ,
Բա՛րէ , յորո՛ց անձն իմ ապրէր ՚ի յոգեսպառ հեծութեանց :
Բանն յիս, այո, նուաճէ ըզթափ կըրիցն յանդուգն յարձակմանց ,
Բայց եւ համայն իշխանութեամբն որով զըսպէն ըզնոսա ,
Բըռնակալէ նոցին եւ ոչ արքայակերպ տիրանայ .
Վէր ՚ի վերոյ թէպէտ թըւի ՚ի կերպարան անվըրդով ,
Այլ ՚ի ներքոյ յուզի սաստիկ մեծ ՚ի պայքար եւ ՚ի խռով :
Հրապոյրք իմն ոչ գիտեմ զիա՛րդ առեալ ձըգեն զիս առ քեզ .
Թէ բանն ՚ի յիս է մեծազօր , այլ արժանիք քո մեծ եւս .
Եւ ըզՍեւեր՝ որ յիս ըզխանդն էարկ՝ դարձեալ տեսանեմ
Հըզօրագոյն եւս ՚ի հրապոյրս աճել յորդոր ինձ ՚ի դէմ ,
Իշխանական փառօք եւ պերճ պատուով առեալ նոր ճաճանչ ,
Եւ յաղթանակս ամենուրեք ըզհետ ձըգեալ մեծասքանչ .
Քաջ իսկ գիտեմ զնոցին կըշիռ , եւ Սեւերոս ոչ խաբեաց
Զոր յայնցանէ կալեայ ես յոյս բազմաբեղուն արգասեաց :
Այլ որ երբեմն զիս պարտուց պատշաճք ՚ի Հռոմ պընդեցին ,
Եւ որք աստէն ընդ օրինօք նուաճեն զիս հօր հրամանին ,
Նոքին եւ արդ ջըրեն զազդու հրապուրանաց զօրութիւն ,
Որ կեղեքէ ուժգին՝ այլ ոչ դըրդուէ զըսրտիս պընդութիւն :
Առաքինի այս այն պատշաճք են անողոքք առ սէր մեր ,
Զորոց բողոք կալեալ քո անդ՝ բայց եւ գովել գովեցեր .
Ըզնոյն բողոք կալջիր եւ արդ , այլ զխըստութիւն գովեա զայն ,
Որ զըքեզն եւ զիս զուգապատիւ դընէ կըրիցս յաղթական .
Եւ խորհեաց քաջ զի սիրտ նենգոտ եւ ՚ի պարտս իւր յերերի
Չէր արժանի ժառանգելոյ ըզսէր մեծին Սեւերի :

ՍԵՒԵՐՈՍ

Ներեա , վեհանձն ինձ տիկին , ո՛հ , ցաւք զիս առնեն թերատես ,
Եւ չըթողուն ինչ տեսանել բաց յաղխիցս աղեկէզ .

Je nommais inconstance, et prenais pour un crime,
De ce juste devoir l'effort le plus sublime.
De grâce, montrez moins à mes sens désolés
La grandeur de ma perte, et ce que vous valez;
Et, cachant par pitié cette vertu si rare,
Qui redouble mes feux lorsqu'elle nous sépare,
Faites voir des défauts qui puissent à leur tour
Affaiblir ma douleur avecque mon amour.

PAULINE

Hélas! cette vertu, quoiqu'enfin invincible,
Ne laisse que trop voir une âme trop sensible.
Ces pleurs en sont témoins, et ces lâches soupirs
Qu'arrachent de nos feux les cruels souvenirs:
Trop rigoureux effets d'une aimable présence
Contre qui mon devoir a trop peu de défense!
Mais si vous estimez ce vertueux devoir,
Conservez-m'en la gloire, et cessez de me voir.
Épargnez-moi des pleurs qui coulent à ma honte;
Épargnez-moi des feux qu'à regret je surmonte;
Enfin épargnez-moi ces tristes entretiens,
Qui ne font qu'irriter vos tourments et les miens.

SÉVÈRE

Que je me prive ainsi du seul bien qui me reste!

PAULINE

Sauvez-vous d'une vue à tous les deux funeste.

SÉVÈRE

Quel prix de mon amour! quel fruit de mes travaux!

PAULINE

C'est le remède seul qui peut guérir nos maux.

SÉVÈRE

Je veux mourir des miens; aimez-en la mémoire.

PAULINE

Je veux guérir des miens; ils souilleraient ma gloire.

Զայդ քոյին ծիղն առաքինի պարտուցդ 'ի փորձ հանդիսից
Համարել քեզ 'ի յանցանս, եւ յեղյեղուկ թուէիր ինձ։
Մի, աղաչեմ, մի դու ցաւոց սրտիս եւ եւս 'ի զայրոյթ
Յայտներ ըղձանք ինձ ըզկորուստ եւ ըզկըշիռ արժանւոյդ.
Այլ քօղարկեալ կարեկցութեամբ ըզքո չըքնաղ զօրութիւն,
Որ յանջատելըն զիս 'ի քէն վառէ սիրոյդ ուժգնագոյն,
Արա հանդէս ինձ թերութեանց, եւ կարիցեմ մանաւանդ
Սփոփել ցաւոցս ըզխըստութիւն եւ ըզսիրոյս մեղմել խանդ։

ՊԱՒԼԻՆԷ

Է զօրութիւնն յիս աններկուն 'ի տոկ, այո, այլ եղո՜ւկ,
Ոչ կարէ՛ նա ծածկել 'ի սպառ ըզյոյզըս կրից եւ զաղմուկ.
Զայն քեզ արտօսր իմ յայտ առնէ, զայն հեծութի՛ և թառանչ
Զոր վերբերէ յինէն սիրոյ դառն յիշատակ մըշտատանջ.
Դառնակըսկիծ արգասիք այսըր սիրատարփ տեսութեան,
Յորմէ չկարեմ գոլ անձնապահ որչափ ինձ պարտն է ու արժան։
Այլ թէ իցէ քեզ մեծարոյ այս սըրբազան զօդից պարտ,
Մի՛ զնորին փառս յինէն կապտեր, արա տեսլեանդ ինձ աւարտ։
Խնայեա յաչացս իմ զարտասուս որք 'ի կորանս ինձ հոսեն,
Ի խանդ սիրոյս խնայեա յըմբոստ եւ ապըստամբ առ յինէն.
Խնայեա եւ յայս բազմավըտանգ զըուցատրութիւն տըխրական,
Որ յերկոցունցս իսկ յաճախեն 'ի սիրտ ըզցաւս անպայման։

ՍԵՒԵՐՈՍ

Այդպէս միակ 'ի սփոփանաց որ ինձ մընայն զի՞ս զըրկես։

ՊԱՒԼԻՆԷ

Խոյս 'ի վտանգէս տուր տեսութեանս աղխտաբեր ինձ եւ քեզ։

ՍԵՒԵՐՈՍ

Իսկ զի՞նչ սիրոյս իմ փոխարէն, ո՞ր մըրցանակ վաստակոց։

ՊԱՒԼԻՆԷ

Միայն դարման է զօրաւոր առ 'ի բուժել ըզմեր խոց։

ՍԵՒԵՐՈՍ

Ես 'ի խոցոյս ըզմահ խընդրեմ. քեզ քաղցրացի միշտ իմ սէր։

ՊԱՒԼԻՆԷ

Ես 'ի խոցոյս բուժիլ խընդրեմ, փառացս անձէ այն ըստուեր։

SÉVÈRE

Ah! puisque votre gloire en prononce l'arrêt,
Il faut que ma douleur cède à son intérêt.
Est-il rien que sur moi cette gloire n'obtienne?
Elle me rend les soins que je dois à la mienne.
Adieu: je vais chercher au milieu des combats
Cette immortalité que donne un beau trépas,
Et remplir dignement, par une mort pompeuse,
De mes premiers exploits l'attente avantageuse,
Si toutefois, après ce coup mortel du sort,
J'ai de la vie assez pour chercher une mort.

PAULINE

Et moi, dont votre vue augmente le supplice,
Je l'éviterai même en votre sacrifice;
Et, seule dans ma chambre enfermant mes regrets,
Je vais pour vous aux dieux faire des voeux secrets.

SÉVÈRE

Puisse le juste ciel, content de ma ruine,
Combler d'heur et de jours Polyeucte et Pauline!

PAULINE

Puisse trouver Sévère, après tant de malheur,
Une félicité digne de sa valeur!

SÉVÈRE

Il la trouvait en vous.

PAULINE

Je dépendais d'un père.

SÉVÈRE

O devoir qui me perd et qui me désespère!
Adieu, trop vertueux objet, et trop charmant.

PAULINE

Adieu, trop malheureux et trop parfait amant.

ՍԵՒԵՐՈՍ

Ո՛հ, զի քո փառք զայդ հրամայեն, տացեն տեղի ցաւք իմ քեզ.
Փառաց քոց զի՞նչ կարեմ ժխտել, որ եւ ընդ փառս իմ խնամես:
Կաց դու ողջամբ. ես դիմագրաւ երթամ 'ի մարտ՝ տարփաւոր
Անմահութեան, զոր հայթայթէ մահ գեղեցիկ անդանօր,
Եւ մեծաշուք մահուն փառօք ածել պըսակ վայելուչ
Իմոց նախկին քաջարութեանցս 'ի յարդասիս թաթաւուչ,
Եթէ կայցէ իսկ 'ի յիս յետ օրհասաբեր հարուածոյդ
Դեռ եւըս շունչ կենդանութեան գոլ ինձ մահու հետամուտ:

ՊԱՒԼԻՆԷ

Եւ Պաւլինէ, որ յերեւաց քոց ցաւք 'ի սիրտ իւր յորդեն,
Ի կենազրաւ իսկ 'ի զոհից խուսափեսցէ առ 'ի քէն.
Եւ յառագաստ իւր մենացեալ աղխողորմ 'ի մըրմունջ
Աղաչաւոր դից վասըն քո հեղցէ աղերս սըրտառուչ:

ՍԵՒԵՐՈՍ

Արդարադատ երկինք իցէ՛ հաշտեալ 'ի սպանդ իմ մահուս
Եւ Պօղիկտեայ եւ Պաւլինեայ յաւելցէ ամս 'ի յաւուրս:

ՊԱՒԼԻՆԷ

Իցէ՛ Սեւեր յետ այսքանեաց հասեալ չարեացըն զկըրեւ
Արդէ կըշիռ ըստ արժանեացն երջանկութիւն յարատեւ:

ՍԵՒԵՐՈՍ

Ես այնմ 'ի քէն ակն ունէի:

ՊԱՒԼԻՆԷ

Դուստր էի ես ոչ ազատ:

ՍԵՒԵՐՈՍ

Ո՛վ դառն օրէնք պարտուց, որ զիս կորուսանեն յուսահատ:
Ողջամբ մնասջիր, առաքինիդ դու յոյժ, եւ յոյժ սիրելի:

ՊԱՒԼԻՆԷ

Ողջամբ գնասջիր, վատաբաղդիկդ յոյժ եւ սիրող տարփելի:

SCÈNE III.

PAULINE, STRATONICE.

STRATONICE

Je vous ai plaints tous deux, j'en verse encor des larmes;
Mais du moins votre esprit est hors de ses alarmes:
Vous voyez clairement que votre songe est vain;
Sévère ne vient pas la vengeance à la main.

PAULINE

Laisse-moi respirer du moins, si tu m'as plainte:
Au fort de ma douleur tu rappelles ma crainte;
Souffre un peu de relâche à mes esprits troublés,
Et ne m'accable point par des maux redoublés.

STRATONICE

Quoi! vous craignez encor?

PAULINE

Je tremble, Stratonice;
Et, bien que je m'effraie avec peu de justice,
Cette injuste frayeur sans cesse reproduit
L'image des malheurs que j'ai vus cette nuit.

STRATONICE

Sévère est généreux.

PAULINE

Malgré sa retenue,
Polyeucte sanglant frappe toujours ma vue.

STRATONICE

Vous voyez ce rival faire des voeux pour lui.

PAULINE

Je crois même au besoin qu'il serait son appui:
Mais, soit cette croyance ou fausse, ou véritable,

ՏԵՍԻԼ Գ.

ՊԱՒԼԻՆԷ, ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Ընդ ձեզ կացեալ ես ողբայի, եւ աչք իմ դեռ արտասուեն.
Բայց գոնեայ արդ սիրտ քո հանդեաւ յերկիւղալից աղմկէն.
Տեսեր ինքնին արդ յայտնապէս զի են երազքդ ընդունայն,
Եւ Սեւեր ոչ գայ վրիժառու շաղախել զաջ իւր յարեան:

ՊԱՒԼԻՆԷ

Եթէ լցէ քո գութ ընդ իս, գոնեայ սթափել ինձ թողցես.
Զի՞ ինձ 'ի յուշ 'ի յեռամդան ցաւոց զերկիւղ իմ ածես.
Ամբոխելոյ հոգւոյս 'ի կրից վայրիկ մի դէթ արա դուլ,
Եւ մի թափեր զոգիս՝ ցաւոց ցաւս 'ի վերայ յաւելուլ:

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Եւ զանգիտե՞ս դու տակաւին:

ՊԱՒԼԻՆԷ

Ստրատոնիկէ, երկընչիմ.
Եւ թէ լցէ իսկ՝ զի չլցէ իրաւացի երկիւղ իմ,
Այլ տարապարտ իսկ այն երկիւղ միշտ ինձ բերէ 'ի պատկեր
Զարհուրելի տեսիլն աղէտալ ինձ յերազի զայս գիշեր:

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Այլ մեծախոհ է Սեւերոս:

ՊԱՒԼԻՆԷ

Թէ եւ նա կրիցէ ժուժկալ,
Այլ յարենէ ինձ 'ի տեսիլ գայ Պողիկտոս շաղախեալ:

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Այժմ իսկ լուար որպէս բարիս նախանձորդին իւր մաղթէր:

ՊԱՒԼԻՆԷ

Ի տալ հարկին աջ եւս 'ի նպաստ կարկառեսցէ մարդասէր.
Թէ հաւատեաւ զայս գիտիցեմ եւ թէ խարիմ 'ի կարծիս,

Son séjour en ce lieu m'est toujours redoutable;
A quoi que sa vertu puisse le disposer,
Il est puissant, il m'aime, et vient pour m'épouser.

SCÈNE IV.

POLYEUCTE, NÉARQUE, PAULINE, STRATONICE.

POLYEUCTE

C'est trop verser de pleurs; il est temps qu'ils tarissent:
Que votre douleur cesse, et vos craintes finissent;
Malgré les faux avis par vos dieux envoyés,
Je suis vivant, madame, et vous me revoyez.

PAULINE

Le jour est encor long; et, ce qui plus m'effraie,
La moitié de l'avis se trouve déjà vraie;
J'ai cru Sévère mort, et je le vois ici.

POLYEUCTE

Je le sais; mais enfin j'en prends peu de souci.
Je suis dans Mélitène; et, quel que soit Sévère,
Votre père y commande, et l'on m'y considère;
Et je ne pense pas qu'on puisse avec raison
D'un coeur tel que le sien craindre une trahison:
On m'avait assuré qu'il vous faisait visite,
Et je venais lui rendre un honneur qu'il mérite.

PAULINE

Il vient de me quitter assez triste et confus;
Mais j'ai gagné sur lui qu'il ne me verra plus.

POLYEUCTE

Quoi! vous me soupçonnez déjà de quelque ombrage?

PAULINE

Je ferais à tous trois un trop sensible outrage.
J'assure mon repos, que troublent ses regards:
La vertu la plus ferme évite les hasards;
Qui s'expose au péril veut bien trouver sa perte:

Սակայն գալուստ նորա այսրէն միշտ արհաւիրս ազդէ ինձ ։
Առաքինին յոր կոյս եւ սիրտ իւր շրջեսցէ զակնարկիս ,
Է՛նա հզօր միշտ տարփածու , եւ գայ 'ի հարսն առնուլ զիս ։

ՏԵՍԻԼ Դ․

ՊՈԼԻԿՏՈՍ , ՆԷԱՐԽՈՍ , ՊԱՒԼԻՆԷ , ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

ՊՈԼԻԿՏՈՍ

Շատ իսկ հեղեր դու արտասուս , արդ սրբեսջիր զաչըս քո ․
Փարատեսցին սրտիդ քո ցաւք , զերկիւղ քոյին լռեսցո ․
Ահա ընդդէմ նախազդեցիկ գուշակութեանց դիցն առ քեզ
Դառնամ ողջամբ այսրէն , տիկին , եւ զիս դարձեալ տեսանես ։

ՊԱՒԼԻՆԷ

Դեռ աւուր կայ , եւ ինձ երկիւղ եւըս քան զեւս յաճախէ ,
Ի տեսանել զելս 'ի կատար գուշակութեանցն ըստ մասնէ ․
ԶՍեւեր մեռեալ ես կարծէի , արդ տեսանեմ ասա ըզնա ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Գիտեմ ես զայն , բայց ոչ մեծ ինչ մեզ 'ի նմանէ երկիւղ կայ ։
Ի Մելիտին Հայոց կամք աստ ․ իցէ Սեւեր որ ինչ էն ,
Բայց հայր քո աստ իշխէ , եւ ընաւ որեարս յինէն ակն ածեն ․
Չիք իսկ տեղի , որպէս կարծեմ , մեզ երկիւղի զաւանաց ,
Զի Սեւերեայ սիրտ այնպիսի չէ , ընդունակ չէ իսկ այնց ․
Նա այժմ առ քեզ եկաւորէ , որպէս լըւայ հաւաստի ,
Եւ փութացայ այսր 'ի պատիւ նորա ըստ իւրն արժանի ։

ՊԱՒԼԻՆԷ

Արդ իսկ յինէն մեկնեալ տըխուր եւ գնաց 'ի բաց այլ յայլմէ ․
Եւ զի մի եւըս զիս տեսցէ՝ խոստումն առի ես յիւրմէ ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Վասն էր ․ յինէ՞ն ինչ խիթացեր կասկած ըզքէն ունելոյ ։

ՊԱՒԼԻՆԷ

Քաւ լիցի դնել զայդ նախատինս երեցունցս իսկ յոյժ ազդոյ ։
Ամբոխելումս 'ի տես նորին զայդ ես խըղճամ ինձ կալայ ․
Ժուժկալութիւն եւս ամրակուռ յար 'ի վտանգաց տեղի տայ ․
Որ անըզգոյշ դիմագրաւի , կորուս[illegible]

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY
ARMENIAN PRELACY

Et, pour vous en parler avec une âme ouverte,
Depuis qu'un vrai mérite a pu nous enflammer,
Sa présence toujours a droit de nous charmer.
Outre qu'on doit rougir de s'en laisser surprendre,
On souffre à résister, on souffre à s'en défendre;
Et, bien que la vertu triomphe de ces feux,
La victoire est pénible, et le combat honteux.

POLYEUCTE

O vertu trop parfaite, et devoir trop sincère,
Que vous devez coûter de regrets à Sévère!
Qu'aux dépens d'un beau feu vous me rendez heureux!
Et que vous êtes doux à mon coeur amoureux!
Plus je vois mes défauts et plus je vous contemple,
Plus j'admire . . .

SCÈNE V.

POLYEUCTE, PAULINE, NÉARQUE, STRATONICE, CLÉON.

CLÉON

Seigneur, Félix vous mande au temple;
La victime est choisie, et le peuple à genoux;
Et pour sacrifier on n'attend plus que vous.

POLYEUCTE

Va, nous allons te suivre. Y venez-vous, madame?

PAULINE

Sévère craint ma vue, elle irrite sa flamme;
Je lui tiendrai parole, et ne veux plus le voir.
Adieu: vous l'y verrez; pensez à son pouvoir,
Et ressouvenez-vous que sa faveur est grande.

POLYEUCTE

Allez, tout son crédit n'a rien que j'appréhende;
Et, comme je connais sa générosité,
Nous ne nous combattrons que de civilité.

Եւ զի յայտնի եւըս կալայց խօսել ընդ քեզ 'ի սըրտէ ,
Որ յարժանեացն որք 'ի հրապոյրս գերէն ըզմեզ յիւրն 'ի սէր ,
Տեսիլ նորա հըզօր է միշտ առ 'ի զսարխըն պընդել :
Թող զառաջին շառագունանըս պարտութեանն անըզգոյշ,
Տագնապ մեծ եւս 'ի ժուժկալէըն է , 'ի խոյս տալ տագնապ յոյժ .
Եւ թէպէտ սիրտ առաքինի լցէ 'ի կրիցն անըրկուն ,
Այլ յաղթանակ է դըժուարին , ամօթապարտ յաղթութիւն :

ՊՈԼԻԿՏՈՍ

Առաքինիդ դու գերազանց , հաւատարիմ պարտուց քոց ,
Որո՞ց արդեօք դու Սեւերի խցես 'ի կշիռ լեալ ցաւոց .
Երջանկութիւն դու ինձ հնարիս 'ի զոհ սիրոյդ անուշից ,
Եւ որպէս զի քաղցրիկ ես դու սըրտիս 'ի ծրար անձկալից :
Քանիցս ընդ քեզ առնում դարձեալ ըզթերութիւնս իմ 'ի զնին ,
Առաւել դու վեհ երեւիս ...

ՏԵՍԻԼ Ե·

ՊՈԼԻԿՏՈՍ , ՊԱՒԼԻՆԷ , ՆԷԱՐԽՈՍ , ՍՏՐԱՏՈՆԻԿԷ , ԿԼԷՈՎՆ

ԿԼԷՈՎՆ

փութա , քեզ , տէր , առ բագնին (անդ
Մըհեայ փեղկըս , ըսպասք պատրաստ կան , եւ ամբոխն 'ի գուշա
Քում միայնոյ մնայ գալըստեան զի մատիցէ զոհն 'ի սպանդ :

ՊՈԼԻԿՏՈՍ

Երթ դու , և զհետ քո գամք և մեք : Գա՞ս և դու անդըր , տիկին :

ՊԱՒԼԻՆԷ

Սեւեր յինէն արդ խուսափէ , ցաւք իւր ինեւ զայրացին .
Հաւատարիմ կամ 'ի խոստմանս ոչ հանդիպել իւր տեսոյն :
Բարեաւ դու մնա , տեսցես զինքն անդ . յո՜շ քեզ նորայն զօրուի ,
Եւ թէ քանի փառօք պատուեալ 'ի շնորհս լցէ՝ քաջ տեսցես :

ՊՈԼԻԿՏՈՍ

Երթ , զօրութիւն նորա այն մեծ ոչ երկիւղի ինչ է մեզ .
Քաջածանօթ գոյ ինձ արդ վեհ եւ մեծախոհ սիրտն ազնիւ .
Մըրցանք ոչ այլ ինչ լիցին մեզ՝ բայց յիրերաց 'ի պատիւ :

SCÈNE VI.

POLYEUCTE, NÉARQUE.

NÉARQUE

Où pensez-vous aller ?

POLYEUCTE

Au temple, où l'on m'appelle.

NÉARQUE

Quoi ! vous mêler aux voeux d'une troupe infidèle !
Oubliez-vous déjà que vous êtes chrétien ?

POLYEUCTE

Vous par qui je le suis, vous en souvient-il bien ?

NÉARQUE

J'abhorre les faux dieux.

POLYEUCTE

Et moi, je les déteste.

NÉARQUE

Je tiens leur culte impie.

POLYEUCTE

Et je le tiens funeste.

NÉARQUE

Fuyez donc leurs autels.

POLYEUCTE

Je les veux renverser,
Et mourir dans leur temple, ou les y terrasser.
Allons, mon cher Néarque, allons aux yeux des hommes
Braver l'idolâtrie, et montrer qui nous sommes :
C'est l'attente du ciel, il nous la faut remplir ;
Je viens de le promettre, et je vais l'accomplir.
Je rends grâces au Dieu que tu m'as fait connaître

ՏԵՍԻԼ Զ․

ՊՈԼԻԿՏՈՍ, ՆԷԱՐԽՈՍ

ՆԷԱՐԽՈՍ

Յո՞ դիմեալ գնաս ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Ի տաճար անդր ուր ինձ 'ի զոհն ակն ունին ։

ՆԷԱՐԽՈՍ

Եւ խառնեսցի՞ս դու 'ի նըւէրս ընդ ամբարիշտ խուժանին․
Քեզ մոռացո՞նք այդպէս եղեն զի քրիստոնեայ այժմիկդ ես ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Մատակարար դու ինձ շնորհին կացեալ՝ զայն քաջ յիշեսցես ։

ՆԷԱՐԽՈՍ

Գարշիմ մերժիմ ես 'ի կռոց ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Գարշելիք են նոյնք եւ ինձ ։

ՆԷԱՐԽՈՍ

Պաշտօն անարգ եւ ամպարիշտ ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Եւ դըժոխոց հընարք պիղծ ։

ՆԷԱՐԽՈՍ

Խոյս տուր ապա դու 'ի բագնեաց ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Արկից ես զայնս 'ի կործան․
Կամ մեռայց անդ 'ի մեհենին, կամ զայնս ոտից տաց կոխան ։
Ե՛կ, սիրելիդ իմ Նէարխոն, եկ 'ի հանդէս ելանեմք
Խայտառակել դիցն ըզպաշտօն եւ ցուցանել ո՞յք իցեմք ։
Այժմ 'ի մէնջ ակն ունին երկինք, պարտ է 'ի գլուխ զայն ածել․
Դեռ եւս ըղնոյն ես խոստացայ, եւ արդ երթամ կատարել ։
Յոյժ շնորհապարտ եմ Աստուծոյն, ում քեւ եղէ ես գիտակ,

De cette occasion qu'il a sitôt fait naître,
Où déjà sa bonté, prête à me couronner,
Daigne éprouver la foi qu'il vient de me donner.

NÉARQUE

Ce zèle est trop ardent, souffrez qu'il se modère.

POLYEUCTE

On n'en peut avoir trop pour le Dieu qu'on révère.

NÉARQUE

Vous trouverez la mort.

POLYEUCTE

Je la cherche pour lui.

NÉARQUE

Et si ce coeur s'ébranle?

POLYEUCTE

Il sera mon appui.

NÉARQUE

Il ne commande point que l'on s'y précipite.

POLYEUCTE

Plus elle est volontaire, et plus elle mérite.

NÉARQUE

Il suffit, sans chercher, d'attendre et de souffrir.

POLYEUCTE

On souffre avec regret, quand on n'ose s'offrir.

NÉARQUE

Mais dans ce temple enfin la mort est assurée.

POLYEUCTE

Mais dans le ciel déjà la palme est préparée.

NÉARQUE

Par une sainte vie il faut la mériter.

Որ անպատումըն բարութեամբ կազմ 'ի կապել ինձ պըսակ՝
Զայս վաղ ընդ փոյթ հաճեցաւ տալ պատեհ չըքնաղ առ 'ի փործ
իւրոյ առ իս ձըրիատուր նորոյ շնորհին հաւատոյ:

ՆԷԱՐԽՈՆ

Յոյժ է վառումըն նախանձուդ, անսա, դիր այնըմ պայման:

ՊՈԼԻԿՏՈՍ

Ո՞ր ճըշմարտին Աստուծոյ չափ է նախանձուն եւ պայման:

ՆԷԱՐԽՈՆ

Ի մահ անձին դիմագրաւես:

ՊՈԼԻԿՏՈՍ

Մեռայց առ սէր իւր ըղձիւք:

ՆԷԱՐԽՈՆ

Իսկ զի՞նչ թէ սիրտ քո սասանի:

ՊՈԼԻԿՏՈՍ

Ինքըն լիցի ինձ նեցուկ:

ՆԷԱՐԽՈՆ

Չեն նորա կամք մեզ անձնամատն երթալ 'ի մահ վայրապար:

ՊՈԼԻԿՏՈՍ

Յոյժ առաւել է պատուական մահ յոր դիմէ ոք յօժար:

ՆԷԱՐԽՈՆ

Շատ է սպասել մահու եւ կրել, չէ պարտ գոլ այնմ 'ի խընդիր:

ՊՈԼԻԿՏՈՍ

Որ զանգիտէն դիմագրաւել՝ լիցի նմա մահ վըշտակիր:

ՆԷԱՐԽՈՆ

Այլ մահ անշուշտ 'ի տաճարի անդ դարանեալ քեզ մընայ:

ՊՈԼԻԿՏՈՍ

Այլ ինձ անշուշտ արդէն յերկինս անդ յաղթանակ պատրաստ
(կայ:

ՆԷԱՐԽՈՆ

Զայն մեզ 'ի ճիգն առաքինի վարուց օրէն է ունել:

POLYEUCTE

Mes crimes, en vivant, me la pourraient ôter.
Pourquoi mettre au hasard ce que la mort assure?
Quand elle ouvre le ciel, peut-elle sembler dure?
Je suis chrétien, Néarque, et le suis tout à fait;
La foi que j'ai reçue aspire à son effet.
Qui fuit croit lâchement, et n'a qu'une foi morte.

NÉARQUE

Ménagez votre vie, à Dieu même elle importe;
Vivez pour protéger les chrétiens en ces lieux.

POLYEUCTE

L'exemple de ma mort les fortifiera mieux.

NÉARQUE

Vous voulez donc mourir?

POLYEUCTE

Vous aimez donc à vivre?

NÉARQUE

Je ne puis déguiser que j'ai peine à vous suivre.
Sous l'horreur des tourments je crains de succomber.

POLYEUCTE

Qui marche assurément n'a point peur de tomber:
Dieu fait part, au besoin, de sa force infinie.
Qui craint de le nier, dans son âme le nie;
Il croit le pouvoir faire, et doute de sa foi.

NÉARQUE

Qui n'appréhende rien présume trop de soi.

POLYEUCTE

J'attends tout de sa grâce, et rien de ma faiblesse.
Mais, loin de me presser, il faut que je vous presse!
D'où vient cette froideur?

NÉARQUE

Dieu même a craint la mort.

ՊՈԼԻԿՏՈՍ

Զայն 'ի հրապոյրս անկեալ մեղաց՝ մարթ է 'ի վտանգ արկանել։
Իսկ առ խմէ՞ գնել զայն յերկրայս, զոր մահ գործէ աներկբայ.
Իցէ՞ իսկ այն դըժոխըմբեր որ զերկնից դրունս ինձ բանայ։
Ես քրիստոնեայ եմ, Նէարխոն, եւ քրիստոնեայ իսկապէս.
Հաւատք զոր եմն արդ ընկալեալ խընդրէ զարդեանց ըղձանդէս.
Որ խուսափէն՝ մեղկ 'ի հաւատս է եւ մեռեալ յոյս նորին։

ՆԷԱՐԽՈՆ

Կենաց անձին խընամ կալջիր, փառքն Աստուծոյ զայդ կամին.
Կեանք քո լիցին պատըսպարան քրիստոնէից որ կան աստ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Այլ օրինակ մահուս լիցի նոցա մեծ եւըս նըպաստ։

ՆԷԱՐԽՈՆ

Մահո՞ւ ուրեմըն փափաքես։

ՊՈԼԻԿՏՈՍ

Կենա՞ց ապա դու ցանկաս։

ՆԷԱՐԽՈՆ

Ծածկել 'ի քէն ես ոչ կարեմ, զաս դըժուարին դու ինձ տաս.
Խիթամ աշխ գուցէ նըկուն զիս արասցեն խիստ տանջանք։

ՊՈԼԻԿՏՈՍ

Որ 'ի հաստոջ առնու ըղկայ, անկանելոյ չիք վըտանգ.
Ամենազօր աջ Բարձրելոյն պահպանէ զնա 'ի վտանգի։
Որ զանգիտէ կալ 'ի յուրասա, է ուրացեալ 'ի սըրտի,
Երկմըտի նա յանձին իւրում, է 'ի հաւատս իւր երկբայ։

ՆԷԱՐԽՈՆ

Որ խիզախէն յանդըգնութեամբ՝ յանձնապաստան իցէ նա։

ՊՈԼԻԿՏՈՍ

Այլ 'ի նորին եմ ես 'ի շնորհս եւ ոչ թէ յիս քաջայոյս։
Բայց զոր 'ի քէն ակն ունէի՝ ինձ իցէ տալ քեզ խրախոյս.
Զի՞ քեզ այդքան երկիւղ ընդ մահ։

ՆԷԱՐԽՈՆ

Զի եւ Աստուած իսկ երկեաւ։

POLYEUCTE

Il s'est offert pourtant; suivons ce saint effort;
Dressons-lui des autels sur des monceaux d'idoles.
Il faut (je me souviens encor de vos paroles)
Négliger, pour lui plaire, et femme, et biens, et rang;
Exposer pour sa gloire et verser tout son sang.
Hélas! qu'avez-vous fait de cette amour parfaite
Que vous me souhaitiez, et que je vous souhaite?
S'il vous en reste encor, n'êtes-vous point jaloux
Qu'à grand'peine chrétien j'en montre plus que vous?

NÉARQUE

Vous sortez du baptême, et ce qui vous anime,
C'est sa grâce, qu'en vous n'affaiblit aucun crime;
Comme encor tout entière, elle agit pleinement,
Et tout semble possible à son feu véhément:
Mais cette même grâce en moi diminuée,
Et par mille péchés sans cesse exténuée,
Agit aux grands effets avec tant de langueur,
Que tout semble impossible à son peu de vigueur.
Cette indigne mollesse et ces lâches défenses
Sont des punitions qu'attirent mes offenses;
Mais Dieu, dont on ne doit jamais se défier,
Me donne votre exemple à me fortifier.
Allons, cher Polyeucte, allons aux yeux des hommes
Braver l'idolâtrie, et montrer qui nous sommes:
Puissé-je vous donner l'exemple de souffrir,
Comme vous me donnez celui de vous offrir!

POLYEUCTE

A cet heureux transport que le ciel vous envoie,
Je reconnais Néarque, et j'en pleure de joie.
Ne perdons plus de temps; le sacrifice est prêt;
Allons-y du vrai Dieu soutenir l'intérêt;
Allons fouler aux pieds ce foudre ridicule
Dont arme un bois pourri ce peuple trop crédule;
Allons en éclairer l'aveuglement fatal;
Allons briser ces dieux de pierre et de métal;

ՊՈԼԻԿՏՈՍ

Աւաղ զանձն 'ի մահ ետ . ո՜հ լիցուք ըզհետ նորին դիմագրաւ .
Մեղաւ նըմին 'ի վերայ դիցըն կանգնեսցուք փլատակաց .
Զի պարտ է մեզ , դեռ ես յիշեմ ըզբանըս քո կանխասաց ,
Առ սէր նորա արհամարհել ըզկեանս , ըզգոյս եւ ըզթագ ,
Տալ 'ի վերայ փառաց նորա զանձն եւ զարիւն բովանդակ :
Աւա՜ղ , եւ ո՞ւր է այն քոյին եռանդն եւ սէր պատարուն ,
Զոր դու երբեմն ինձ մաղթէիր , եւ արդ մաղթեմ քեզ ըզնոյն :
Թէ առկայծէ դեռ այն 'ի քեզ՝ ո՞չ դու շարժիս 'ի նախանձ
Ի տեսանել ըզնորակնունքս յայնմիկ ըզքեւ գերազանց :

ՆԷԱՐԽՈՆ

Նորածնելում յաւազանէն՝ առոյգ 'ի յոյժ մեծազօր ,
Սուրբ 'ի մեղաց , որք ըզկորով մեղկեն շնորհին երկնաւոր ,
Եւ որ համայն հոգիացեալդ ես 'ի նորին ծոխութիւն ,
Անհընարինքն իսկ հեշտ թըւին քեզ 'ի քոց այնըր սիրոյն .
Աւաղ յիս շնորհացն ըսկըզբնածիր նուազել պարգեւք երկնաւոր,
Եւ զօրութիւն նորա 'ստ մեղացս յոգունց մեղկեալ օր աւուր ,
Ոչ ես իշխէ 'ի մեծամեծըս ձեռնարկել քաջաբար ,
Եւ ամենայն ինչ անկելում յուժոյ թըւի անհընար :
Այս վատութիւն ամօթապարտ եւ այս փախուստ անարի
Գիտեմ զի խիստ է պատուհաս մեղաց իմոց արժանի .
Աւաղ դըթութեանցըն Տէր յոր պարտ է մեզ ունել միշտ ըզյոյս ,
Նախանձելի ինձ օրինակ բարեաց ըզքոյդ տայ խրախոյս :
Եկ , սիրելիդ իմ Պոլիկտէ , եկ 'ի հանդէս ելանեմք ,
Խայտառակել դիցն ըզպաշտօն եւ ցուցանել ո՞վ իցեմք .
Իցէ եւ ինձ գոյր արկանել 'ի քեզ նախանձ 'ի տոկալ
Որպէս դու ինձ 'ի դիմագրաւ տալ զանձն 'ի վտանգ կամակար :

ՊՈԼԻԿՏՈՍ

Ի բարեբաղդ յերկնադդեցիկ յայդ փոփոխումըն սըրտի
Ճանաչեմ զիմըս Նէարխոն , եւ արտասուեմ առ խընդի :
Զո՞հք 'ի բագնին կան 'ի զենուլ, չէք յամելոյ ժամանակ .
Ո՜ն , Աստուծոյն ճըշմարտի անդըր ճեպեսցուք նահատակ .
Երթիցուք տալ ըզխաղալիկըն շանթ ոտից 'ի կոխան ,
Որով ըզփայլըն փուտ զինէ դիւրահաւատըն խուժան .
Ո՜ն , երթիցուք բանալ 'ի լոյս զաչս առ 'ի մահ կուրացեալ ,
Եւ փըշրեսցուք ըզկուռսըն սուտ ըզկոփածոյ եւ զհրահալ .

Abandonnons nos jours à cette ardeur céleste;
Faisons triompher Dieu: qu'il dispose du reste.

NÉARQUE

Allons faire éclater sa gloire aux yeux de tous,
Et répondre avec zèle à ce qu'il veut de nous.

Երկնազդեցիկ 'ի մեզ հըրոյս լիցուք կենօք մեք ճարակ .
Հարցուք զերկնից ըզպատերազմ՝ թօղեալ 'ի նա զյաղթանակ ։

ՆԷԱՐԽՈՆ

Ո՛ն , երթիցուք մեծահանդէս փառացն երկնից տալ ըզցոյց ,
Եղեալ գործոնք հաւատարիմք կամացն առ մեզ զոր եցոյց ։

ACTE TROISIÈME

SCÈNE I.

PAULINE.

Que de soucis flottants, que de confus nuages
Présentent à mes yeux d'inconstantes images!
Douce tranquillité, que je n'ose espérer,
Que ton divin rayon tarde à les éclairer!
Mille agitations, que mes troubles produisent,
Dans mon coeur ébranlé tour à tour se détruisent;
Aucun espoir n'y coule où j'ose persister;
Aucun effroi n'y règne où j'ose m'arrêter.
Mon esprit, embrassant tout ce qu'il s'imagine,
Voit tantôt mon bonheur, et tantôt ma ruine,
Et suit leur vaine idée avec si peu d'effet,
Qu'il ne peut espérer ni craindre tout à fait.
Sévère incessamment brouille ma fantaisie:
J'espère en sa vertu, je crains sa jalousie;
Et je n'ose penser que d'un oeil bien égal
Polyeucte en ces lieux puisse voir son rival.
Comme entre deux rivaux la haine est naturelle,
L'entrevue aisément se termine en querelle;
L'un voit aux mains d'autrui ce qu'il croit mériter,
L'autre un désespéré qui peut tout attenter.
Quelque haute raison qui règle leur courage,
L'un conçoit de l'envie, et l'autre de l'ombrage;
La honte d'un affront que chacun d'eux croit voir
Ou de nouveau reçue, ou prête à recevoir,
Consumant dès l'abord toute leur patience,
Forme de la colère et de la défiance;
Et, saisissant ensemble et l'époux et l'amant,
En dépit d'eux les livre à leur ressentiment.
Mais que je me figure une étrange chimère!
Et que je traite mal Polyeucte et Sévère,

ՀԱՆԴԷՍ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա․

ՊԱՒԼԻՆԷ

Ի բազմայոյզ հոգոց 'ի ծուփս եւ 'ի վարանըս մըթին ,
Տեսիլք անդուլ ըզհետ միմեանց ինձ ընդ աղօտ նըկարին ·
Ով ցանկալիդ խաղաղութիւն , 'ի քեզ յուսալ թէ ներես ,
Երկնաճաճանչ նըշուլիւք երբ զայնս ինձ 'ի լոյս վերըբերցես :
Յամբոխելոյ մըտացս 'ի հոգ՝ յոյզք խորհըրդոց բազմածին
Խուժեն 'ի սիրտ իմ սասանեալ եւ քերերաց եղծանին .
Թէ առկայծէ յուսոյ նըշոյլ , է փայլ նորա խաբուսիկ ·
Թէ արհաւրաց տիրէ երկիւղ , չեն եւ նորա հաւաստիք :
Կերպացելոց հոգիս 'ի միտս իմ պատկերաց լեալ հաւան ,
Երջանկութիւն մերթ տեսանէ , մերթ ինձ կորուստ յապագայն .
Եւ յանէակ ցնորից 'ի խառըս անկեալ զրահեա վայրապար ,
Մըշտատատան ընդ ահ ընդ յոյս կայ յերերի անդադար :
Տագնապ է ինձ 'ի Սեւերեայ , յուզիմ անդուլ 'ի կասկած .
Սիրտ իւր վեհանձն ազդէ յիս յոյս , այլ ահ՝ նորայն յիս նախանձ .
Եւ երբ իցէ ինձ վըստահել զի Պոլիկտոս աստանօր
Սիրողաբար տեսցէ աչօք ըզնախանձորդ իւր հըզօր :
Եւ զի սովոր է նախանձորդ ընդ նախանձորդ ըզչարել,
Նոցա միմեանց յերեսանալ խանձեսցի մարտ աններէք ·
Մին ըզպահեստ անձին 'ի ձեռս այլոց տեսեալ 'ի յաւար ,
Միւսն յուսահատ որ ձեռներէց ընաւից չարեաց գոլ 'ի հնար ,
Թէպէտ եւ բանն ըզգօն՝ կըրից նոցին իցէ խոկ ուղղեակ ,
Սակայն յուզի մին 'ի նախանձ , միւսն 'ի կասկած դըժընդակ ·
Եւ զըրկանացըն նախատինք զոր համարին երկոքեան
Ընկալեալ մին այժմէն , եւ միւսն ընդ հուպ ահա սպառնական ,
Վաղ ըսպառեալ ըզըռնադատ զօգւոց նոցա ժոյժ 'ի տոկ ,
Եւ 'ի զայրոյթ վառեալ աչեղ եւ 'ի կասկած անողոք ,
Դըրդէ զիւրայն ընդ տարփածուին գալ գիրկընդխառն 'ի գըրգիռ.
Եւ յակամայս գոլ անձնատուր ցասմանն 'ի թափ վըէժխընդիր :
Աւա՜ղ զի՞ 'ի ցնորըս խօլական բանդագուշիմ ես 'ի զուր՝
Ի Պոլիկտոս եւ 'ի Սեւեր չըփեալ ըզվատըն բարուր .

Comme si la vertu de ces fameux rivaux
Ne pouvait s'affranchir de ces communs défauts!
Leurs âmes à tous deux d'elles-mêmes maîtresses
Sont d'un ordre trop haut pour de telles bassesses:
Ils se verront au temple en hommes généreux.
Mais, las! ils se verront, et c'est beaucoup pour eux.
Que sert à mon époux d'être dans Mélitène,
Si contre lui Sévère arme l'aigle romaine,
Si mon père y commande, et craint ce favori,
Et se repent déjà du choix de mon mari?
Si peu que j'ai d'espoir ne luit qu'avec contrainte;
En naissant il avorte, et fait place à la crainte;
Ce qui doit l'affermir sert à le dissiper.
Dieux! faites que ma peur puisse enfin se tromper!
Mais sachons-en l'issue.

SCÈNE II.

PAULINE, STRATONICE.

PAULINE

Eh bien! ma Stratonice,
Comment s'est terminé ce pompeux sacrifice?
Ces rivaux généreux au temple se sont vus?

STRATONICE

Ah, Pauline!

PAULINE

Mes voeux ont-ils été déçus?
J'en vois sur ton visage une mauvaise marque.
Se sont-ils querellés?

STRATONICE

Polyeucte, Néarque,
Les chrétiens...

PAULINE

Parle donc: les chrétiens...

STRATONICE

Je ne puis.

Առաքինեացն երկաքանչիւր խոկ ստոխաց չիցէ հնար
Հասարակաց մարդկան կըրից գեր 'ի վերոյ ամբառնալ.
Երկաքանչիւր նոցա հոգւոցն եղով անձին ինքնիշխան,
Եւ ամբարձեալ գերաշխարհիկ անընդունակ վատութեան,
Նոքա 'ի միտըս մեծախոհ տեսցեն զիրեարս 'ի բագնին:
Սակայն, աւա՛ղ, տեսցեն զիրեարս, եւ անկցի խանձ 'ի լուցկին:
Զի՞նչ ամուսնոյս իմ օգտեսցէ 'ի Մելիտոլին գուլ քաղաք,
Թէ ըզ Հռոմայ զարծուիս նըմին զինէ Սեւեր հակառակ,
Երբ հայրն իմ աստ գոլով իշխան եւ զարհուրի յաոխէն,
Եւ յընտրութիւն խոկ փեսային թէ ստրջացեալ է այժմէն:
Ներշսւ յուսոյ յիս առկայծեալ նըսեմաստուեր նըշողէ,
Եւ յարծարծել անդ խափուցեալ՝ դառնայ 'ի չէք յերկիւղէ.
Եւ որ յուսոյն է հաստարան՝ նոյն զայն վանէ տարագիր:
Երկինք, իցիւ դուք ինձ 'ի զուր հանջէք զերկիւղն իմ պատիր:
Այլ եկք իրացըն մեզ ցուցցեն:

ՏԵՍԻԼ Բ.

ՊԱՒԼԻՆԷ, ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

ՊԱՒԼԻՆԷ

Ստրատոնիկէ, ո՞ն լուիցուք.
Կատարեցա՞ւ աշխարհախումբ զոհին հանդէս մեծաշուք.
Զսդ դիւցազունքն 'ի տաճարին երեւեցա՞ն իրերաց:

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Ա՛հ, Պաւլինէ:

ՊԱՒԼԻՆԷ

Զի՞նչ, լսելի չեղե՞ն իմ ձայնք մաղթանաց.
Այդ կերպարանք քո այլափոխ չարագուշակ յոյժ ինձ գոն.
Միթէ 'ի կռիւ անդ ընդ իրեարս...

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Ընդ Պոլիկտեայ Նէարխոս,
Եւ քրիստոնեայք...

ՊԱՒԼԻՆԷ

Զի՞նչ քրիստոնեայք, ասէ սաս:

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Եւ ո՞րպէս:

PAULINE

Tu prépares mon âme à d'étranges ennuis.

STRATONICE

Vous n'en sauriez avoir une plus juste cause.

PAULINE

L'ont-ils assassiné ?

STRATONICE

Ce serait peu de chose.
Tout votre songe est vrai, Polyeucte n'est plus . . .

PAULINE

Il est mort ?

STRATONICE

Non, il vit; mais, ô pleurs superflus !
Ce courage si grand, cette âme si divine,
N'est plus digne du jour, ni digne de Pauline.
Ce n'est plus cet époux si charmant à vos yeux;
C'est l'ennemi commun de l'État et des dieux,
Un méchant, un infâme, un rebelle, un perfide,
Un traître, un scélérat, un lâche, un parricide,
Une peste exécrable à tous les gens de bien,
Un sacrilége impie, en un mot, un chrétien.

PAULINE

Ce mot aurait suffi sans ce torrent d'injures.

STRATONICE

Ces titres aux chrétiens sont-ce des impostures?

PAULINE

Il est ce que tu dis, s'il embrasse leur foi;
Mais il est mon époux, et tu parles à moi.

STRATONICE

Ne considérez plus que le Dieu qu'il adore.

ՊԱՒԼԻՆԷ

Մեծի ցաւոց գուշակ են բանք քո հատկըլեալ կէս 'ի կէս ։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Մեծագունի ցաւոց չիցէ երբէք ունել քեզ պատճառ ։

ՊԱՒԼԻՆԷ

Մի՛թէ սպանա՞ւ . . .

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Դոյզն 'ի չարեաց լինէր մահուն պատահար ։
Երագքդ 'ի գլուխ գան ելանեն , Պօլիկտ ոչ եւս է , չէ այլ . . .

ՊԱՒԼԻՆԷ

Զի՞նչ , մեռա՞ւ նա ։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Ոչ , ողջ իսկ է . բայց , ո՜վ ընդ վայր ողբք հեղեալ ,
Արին այն քաջ վեհիցն յերկրի զարմ եւ պատկեր գիւցական
Ոչ եւս լուսոյ է արժանի , ոչ Պաւլինեայ զուգական .
Ոչ է պատուեալն 'ի քէն փեսայ եւ քեզ սիրով սիրելի ,
Այլ աշխարհի եւ Պետութեան եւ աստուածոց Թըշնամի ,
Չար անօրէն եւ ապըստամբ , նենգող , մատնիչ եւ դրուժան ,
Եղեռնաւոր եւ վատ արանց , արիւնարբու չար գազան ,
Ապականիչ լաւօրերոյ ժանտախտ 'ի ժահըր դըժնեայ ,
Մեհենապերծ հրէշ այլանդակ , համայն ասել՝ քրիստոնեայ ։

ՊԱՒԼԻՆԷ

Անուանդ այդ շատ էր , եւ ումպէտ Թըշնամանացըդ խուժան ։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Իսկ այդպիսիս ըզքրիստոնեայս կոչել իցե՞ն Թըշնամանք ։

ՊԱՒԼԻՆԷ

Իցէ 'ստ բանիդ՝ ըզքրիստոնեայց Թէ ընկալաւ նա զհաւատ ,
Այլ իմ փեսայ է տակաւին , եւ դու առ իս խօսիս զայդ ։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Մի եւս 'ի նա , այլ յոր պաշտէին նա հայեսջիր դու ընդ այն ։

PAULINE

Je l'aimai par devoir; ce devoir dure encore.

STRATONICE

Il vous donne à présent sujet de le haïr;
Qui trahit tous nos dieux aurait pu vous trahir.

PAULINE

Je l'aimerais encor, quand il m'aurait trahie;
Et si de tant d'amour tu peux être ébahie,
Apprends que mon devoir ne dépend point du sien:
Qu'il y manque, s'il veut; je dois faire le mien.
Quoi! s'il aimait ailleurs, serais-je dispensée
A suivre, à son exemple, une ardeur insensée?
Quelque chrétien qu'il soit, je n'en ai point d'horreur;
Je chéris sa personne, et je hais son erreur.
Mais quel ressentiment en témoigne mon père?

STRATONICE

Une secrète rage, un excès de colère,
Malgré qui toutefois un reste d'amitié
Montre pour Polyeucte encor quelque pitié.
Il ne veut point sur lui faire agir sa justice,
Que du traître Néarque il n'ait vu le supplice.

PAULINE

Quoi! Néarque en est donc?

STRATONICE

Néarque l'a séduit;
De leur vieille amitié c'est là l'indigne fruit.
Ce perfide tantôt, en dépit de lui-même,
L'arrachant de vos bras, le traînait au baptême.
Voilà ce grand secret et si mystérieux
Que n'en pouvait tirer votre amour curieux.

PAULINE

Tu me blâmais alors d'être trop importune.

STRATONICE

Je ne prévoyais pas une telle infortune.

ՊԱՒԼԻՆԷ

Ըզնա սիրել ինձ պարտք էին, եւ նոյն պարտք կան ինձ եւ մնան:

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Սակայն պատճառըս քեզ տայ արդ ուծանալոյ յինքենէ.
Որ դիցըն գոյ հաւատադրուժ, նոյն ինքն եւ քեզ իսկ նենգէ:

ՊԱՒԼԻՆԷ

Թէպէտ եւ ինքըն նենգեսցէ, այլ ես ըզնա սիրեցից.
Եւ զարմացումըն թէ ածէ քեզ այսանակ սէր տարփից,
Ուսի՛ր զի պարտք իմոյս սիրոյ ոչ նորայովքըն չափին.
Թող թերասցի նա 'ի յիւրմէն, ես զիմն առնեմ զարժանին:
Թէ տռփի օտար վառէր 'ի նա, ազէ, զիա՞րդ քեզ թըւի՝
Է՞ր ինձ օրէն հանգոյն նըմին տըռփալ 'ի սէր օտարի:
Թէ եւ իցէ նա քրիստոնեայ, այլ չէ նա ինձ գարշելի.
Միշտ սիրեցից զանձըն նորա, իցէ վրիպակն ատելի:
Բայց հայրն իմ յի՞նչ կիրս է առ նա, զո՞ր ցուցանէ կերպարան:

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Սիրտն 'ի ցասումն յուզի վառեալ 'ի հուր զանխուլ բարկութե̂.
Այլ վասն անձուկ յառաջագոյն մըտերմութեանըն մեծի՝
Ոչ փակէ զգութ իւր 'ի նմանէ, դեռ եւս ընդ նա կարեկցի:
Ըզգաստակնիք մահու զնովաւ ածել՝ թողու դեռ 'ի պահ,
Մինչեւ տեսցէ նա զսիրելին իւր Նէարխոս չարամահ:

ՊԱՒԼԻՆԷ

Նէարխոս, զի՞նչ, նա ինքն ապա...

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Նա ինքն ըզնա գըլթեցոյց.
Այս արգասիք եղեն նոցա մտերիմ սիրոյն վաղընջուց:
Ո՞չ անօրէնն այն 'ի քոյոց կորզեալ ըզնա 'ի գըրկաց,
Յաւազանին իւրեանց 'ի ջուրըս մըխըրճել բըռնի ած.
Եւ այս ահա գաղտնիքըն էին մեծ եւ պահեստ առ 'ի քէն,
Զոր վերբերել զուր ջանացաւ սէրդ հետազօտ 'ի սըրտէն:

ՊԱՒԼԻՆԷ

Դու ինձ յայնժամ ընդ ժըտութեանն իմ լինէիր մեղադիր:

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Եւ որպէս մարթ էր կասկածել ընդ մեծեղեան այն ոճիր:

PAULINE

Avant qu'abandonner mon âme à mes douleurs,
Il me faut essayer la force de mes pleurs;
En qualité de femme, ou de fille, j'espère
Qu'ils vaincront un époux, ou fléchiront un père.
Que si sur l'un et l'autre ils manquent de pouvoir,
Je ne prendrai conseil que de mon désespoir.
Apprends-moi cependant ce qu'ils ont fait au temple.

STRATONICE

C'est une impiété qui n'eut jamais d'exemple.
Je ne puis y penser sans frémir à l'instant,
Et crains de faire un crime en vous la racontant.
Apprenez en deux mots leur brutale insolence.
Le prêtre avait à peine obtenu du silence,
Et devers l'orient assuré son aspect,
Qu'ils ont fait éclater leur manque de respect.
A chaque occasion da la cérémonie,
A l'envi l'un et l'autre étalait sa manie,
Des mystères sacrés hautement se moquait,
Et traitait de mépris les dieux qu'on invoquait.
Tout le peuple en murmure, et Félix s'en offense;
Mais tous deux s'emportant à plus d'irrévérence:
« Quoi! lui dit Polyeucte en élevant sa voix,
« Adorez-vous des dieux ou de pierre ou de bois? »
Ici dispensez-moi du récit des blasphèmes
Qu'ils ont vomis tous deux contre Jupiter mêmes:
L'adultère et l'inceste en étaient les plus doux.
« Oyez, dit-il ensuite, oyez, peuple; oyez tous:
« Le Dieu de Polyeucte et celui de Néarque
« De la terre et du ciel est l'absolu monarque,
« Seul être indépendant, seul maitre du destin,
« Seul principe éternel, et souveraine fin.
« C'est ce Dieu des chrétiens qu'il faut qu'on remercie
« Des victoires qu'il donne à l'empereur Décie;
« Lui seul tient en sa main le succès des combats;
« Il le peut élever, il le peut mettre à bas;
« Sa bonté, son pouvoir, sa justice est immense;
« C'est lui seul qui punit, lui seul qui récompense:
« Vous adorez en vain des monstres impuissants. »

ՊԱՒԼԻՆԷ

Այլ չեւ 'ի կրից ատոփ ցաւոց լըքեալ 'ի սպառ յուսահատ ,
Ո՜ն զարտասուաց ժամ է հանել ըզզօրութիւն 'ի ճակատ .
Իբր ամուսին , կամ որպէս դուստր յուսացեալ ակն ունիմ
Ցիս ըզփեսայն իմ նըւաճել , կամ ողոքել ըզհայրն իմ։
Իսկ թէ անզօր առ երկոսին իսկ ոչ գնասցեն արտասուք ,
Ի յուսահատ կիրս անձնատուր նոցին եւեթ անսասցուք :
Բայց դու պատմեա որ ինչ իբր անդ 'ի տաճարին գործեցան :

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Ո՛ ճիրք անլուրք ամպարըշտացն անօրինակ եղեւան ,
Ոյր յիշատակ ինձ արհաւիրս ածէ եւ դող ոսկերաց .
Սոսկամ պատմել զայն թէ դուցէ մեղապարտ դիցն իսկ զըսայց։
Լուր դու ապա կարճ 'ի կարճոյ զնոցին վայրագ ժըպրհութիւն :
Այն ինչ քըրմին խաղաղութեան տուեալ հրաման ժողովըն ,
Եւ կայր զերեսս իւր հաստատեալ ելիցն հանդէպ արեւու ,
Նորա անդէն ժըպիրհ դիմօք դիցն անպատկառ անարգու
Ըստ կատարել զոհին՝ պատեհ զօրէնս առեալ պաշտամանց ,
Այր քան զընկեր յանդըգնագոյնըս մոլէին 'ի լուտանս ,
Բարձր 'ի ծիծաղ ըզսըրբութիւնսըն հեգնելով ահաւոր ,
Եւ թըշնամանս աղօթընկալ արկեալ 'ի դիս մեծազօր :
Յուզէր ամբոխն 'ի քըրթմընջիւն , փելլքս 'ի սիրտ բոցավառ .
Այլ երկոքին նոքա անսանձ ժըպրհեալ եւ եւս անպատկառ ,
Եւ Պոլիկտեայ անդ ձայն բարձել գոչէր առ նա . " Մինչեւ ցե՞րբ
" Զաստուածականըն տայք պաշտօն 'ի քար ու 'ի փայտ դիցա-
Ներեսցի՞ր ինձ լռել աստէն ըզհայհոյանան աչաղին , (կերպ ,, :
Զօր եւ առ մեծն իսկ Արամազդ՝ սոսկամ ասել՝ ժայթքեցին .
Թեթեւագոյն յայնց էր ընացողն եւ մըծղընեայ անօրէն :
" Լուարուք , յաւել ապա , լուարուք ինձ ժողովուրդք համօրէն .
" Ի Պոլիկտեայ պաշտեալն Աստուած՝ զօր եւ պաշտէ Նէարխոս ,
" Երկնից երկրի նա ինքն է տէր միահեծան գերապուն ,
" Որ ինքն եւեթ ամենիշխան անօրէն բաղդի եւ բաշխից ,
" Ինքն անըսկիզբն , ինքըն պատճառ , նոյն եւ վախճան բոլորից։
" Նա ինքն Աստուած քրիստոնէից , եւ եմք նըմին շնորհապարտ
" Վասն յաղթութեանցըն Դեկոսի ինքնակալին մեր 'ի մարտ .
" Պատերազմաց բաղդին նըժարք 'ի նորայում կան 'ի բուին ,
" Եւ 'ի շարժել յօնիցն յառնեն գահոյք , ու 'ի կոր կործանին .
" Արդարութեան նորա հըզօր եւ գըթութեան չիք սահման .
" Տայ եղեռան պատիժ եւ տայ նա մըրցանակ բարութեան .
" Զի՞ ճիւաղացդ ապիկարից տանիք պաշտօն դուք անտեղաց ,, :

Se jetant à ces mots sur le vin et l' encens,
Après en avoir mis les saints vases par terre,
Sans crainte de Félix, sans crainte du tonnerre,
D' une fureur pareille ils courent à l' autel.
Cieux! a-t-on vu jamais, a-t-on rien vu de tel!
Du plus puissant des dieux nous voyons la statue
Par une main impie à leurs pieds abattue:
Les mystères troublés, le temple profané,
La fuite et les clameurs d' un peuple mutiné
Qui craint d' être accablé sous le courroux céleste.
Félix . . . Mais le voici qui vous dira le reste.

PAULINE

Que son visage est sombre et plein d' émotion!
Qu' il montre de tristesse et d' indignation!

SCÈNE III.

FÉLIX, PAULINE, STRATONICE.

FÉLIX

Une telle insolence avoir osé paraître!
En public! à ma vue! Il en mourra, le traître.

PAULINE

Souffrez que votre fille embrasse vos genoux.

FÉLIX

Je parle de Néarque, et non de votre époux.
Quelque indigne qu' il soit de ce doux nom de gendre,
Mon âme lui conserve un sentiment plus tendre;
La grandeur de son crime et de mon déplaisir
N' a pas éteint l' amour qui me l' a fait choisir.

PAULINE

Je n' attendais pas moins de la bonté d' un père.

FÉLIX

Je pouvais l' immoler à ma juste colère:
Car vous n' ignorez pas à quel comble d' horreur

Եւ զոյգ բանին դիմեալ առ խունկն եւ 'ի գինին նուիրաց՝
Ըզսըրբազան սպասուցն հարեալ զանօթս արկին 'ի տապաստ,
Ոչ փելիքսի ինչ ակնածեալ, ոչ եւ շանթից երկնասաստ:
Նովին ապա մոլեգնութեամբ 'ի բագին անդր յարձակեալ,
Երկինք, իցէ՞ ուրուք տեսեալ ոճիր հանգոյն կամ լուեալ,
Զամենամեծն 'ի դից տեսաք անդ յամպարիշտ 'ի ձեռաց
Արկեալ յերկիր եւ լեալ կոխան ոտից պղծոց գարշելեաց:
Պղծի տաճարըն վեհափայր, նուէրք զոհին 'ի բագնին,
Ճիչք եւ խուճապ խառնաշփոթ, եռայ խուժան ամբոխին՝
Երկիւղալից 'ի մեծ տագնապ յերկնատեղաց ցասմանէ: (մեսցէ:
Անդ եւ փելիքս . . . Այլ ինքն ահա, զմնացորդն ինքնին պատ-

ՊԱՒԼԻՆԷ

Զի՞ այլափոխ տեսիլ դիմաց յուզեալ 'ի կիրըս պէսպէս. (տես:
Սըրտմըտութիւն 'ի նմա խառնեալ ընդ տըրտմութեան գան 'ի

ՏԵՍԻԼ Գ.

ՓԵԼԻՔՍ, ՊԱՒԼԻՆԷ, ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

ՓԵԼԻՔՍ

Ա՜յ նենգաւոր ապերասան, յանդըգնութիւն մինչ ցայս վայր.
Ի հանդիսի. ինձ ակներեւ: Տացի 'ի մահ չարաչար:

ՊԱՒԼԻՆԷ

Խնայեա յիս, հայր, շնորհեա դըստեր քում որ զոտիւքըդ փա-
(րիմ:

ՓԵԼԻՔՍ

Ըզնեարխոն չարեացապարտ, ոչ զամուսնոյդ բարբառիմ.
Թէպէտ չիցէ նա արժանի կոչիլ այլ եւս իմ փեսայ,
Այլ գութ սըրտի հըզօրագոյն դեռ եւս յուզի յիս առ նա.
Ոչ եղեռանց նորա ոճիրք, ոչ թափ ցասմանն իմ մեծի
Յաղթել սիրոյս իմ զօրեցին, որով ըզնա ընտրեցի:

ՊԱՒԼԻՆԷ

Եւ ոչ այլազգ ինչ 'ի բարւոյ հօրէդ էր ակն ինձ ունել:

ՓԵԼԻՔՍ

Արդար ցասմանն իմոյ 'ի սպանդ հանել ըզնա ինձ պարտ էր.
Ոչ անծանօթ իցէ եւ քեզ յոր մեծեղեան 'ի յոճիր

De son audace impie a monté la fureur ;
Vous l'avez pu savoir du moins de Stratonice.

PAULINE

Je sais que de Néarque il doit voir le supplice.

FÉLIX

Du conseil qu'il doit prendre il sera mieux instruit,
Quand il verra punir celui qui l'a séduit.
Au spectacle sanglant d'un ami qu'il faut suivre,
La crainte de mourir et le désir de vivre
Ressaisissent une âme avec tant de pouvoir,
Que qui voit le trépas cesse de le vouloir.
L'exemple touche plus que ne fait la menace :
Cette indiscrète ardeur tourne bientôt en glace ;
En vain vous en avez l'esprit inquiété,
Il se repentira de son impiété.

PAULINE

Vous pouvez espérer qu'il change de courage ?

FÉLIX

Aux dépens de Néarque il doit se rendre sage.

PAULINE

Il le doit ; mais, hélas ! où me renvoyez-vous,
Et quels tristes hasards ne court point mon époux,
Si de son inconstance il faut qu'enfin j'espère
Le bien que j'espérais de la bonté d'un père ?

FÉLIX

Je vous en fais trop voir, Pauline, à consentir
Qu'il évite la mort par un prompt repentir.
Je devais même peine à des crimes semblables ;
Et, mettant différence entre ces deux coupables,
J'ai trahi la justice à l'amour paternel ;
Je me suis fait pour lui moi-même criminel ;
Et j'attendais de vous, au milieu de vos craintes,
Plus de remerciments que je n'entends de plaintes.

PAULINE

De quoi remercier qui ne me donne rien ?
Je sais quelle est l'humeur et l'esprit d'un chrétien.

Դա ամբարիշտ մոլեգնութեամբն եհաս յանդուգն եւ ժըպիրհ.
Սորատոնիկեայ անշուշտ պատմեալ իցէ քեզ զայն ամենայն:

ՊԱՒԼԻՆԷ

Ի տես մահուն Նէարխոնի զնա պահեցեր՝ գիտեմ զայն:

ՓԵԼԻՔՍ

Զի 'ի տեսիլ պատժոյ նորին՝ յորմէ յուսաթեալ դիւթեցաւ,
Ըզգօնասցի խորհուրդ բարեաց առնուլ 'ի ճահ ընտրանաւ:
Ի ճապաղիս արեան մտերմին զեւրն յակն արկեալ յանդիման,
Մահուն երկիւղ եւ վայելից կենաց անձուկ ցանկութեան
Այնպէս հըզօրք են 'ի գործել ազդումն 'ի սիրտ խորազգաց,
Զի որ զայլոյ տեսս կորուստ՝ խուսէ անտի ինքն 'ի բաց,
Եւ մոլեգին հուր եռանդանըն վաղ դառնայ 'ի մոխիր.
Քան զահընկէց սաստիցն որոտ՝ ազդողագոյն է տեսիլ:
Զուր վըրդովեալ կաս 'ի տագնապ ցաւոց սըրտի ընդունայն,
Ըստըրջացի նա 'ի չարեաց իւրոց ոճիր եղեռան:

ՊԱՒԼԻՆԷ

Եւ թողացի՞ նա յանխըհեր արութենէն, յուսամ, ո՛ն:

ՓԵԼԻՔՍ

Նէարխոնի խրատեալ մահուամբ՝ բերցէ յանձին միտս ըզգօն:

ՊԱՒԼԻՆԷ

Այդպէս արժան էր. այլ, աւա՜ղ, զո՞ր ցուցանես յոյս ինձ, հայր,
Յո՞ր յեղակարծ անկցի 'ի վտանգ հոգւոյս հատորն իմ եւ այր,
Թէ զոր 'ի հօրըդ գըթալիր բարութենէ խընդրեմ արդ՝
Ի փոխելոյ մըտաց նորա ինձ ակն ունել իցէ պարտ:

ՓԵԼԻՔՍ

Ըզբարութեանն իմ հաւաստիս, Պաւլինէ, շատ իսկ ցուցի,
Շնորհեալ նըմա զարեւ կենաց թէ զգօնացեալ զըղջասցի:
Զառածելոցն 'ի նոյն ոճիր՝ նոյն պատուհաս է արժան.
Եւ թէ երկուցդ ես այդոցիկ կըշռեմ դարձուած զանազան,
Ծընելասէր գութ յիս նենգէ արդարութեան մատընտու,
Եւ գտայց փոխան յանցուցելոյն արժան ես ինքըն մահու:
Շնորհակալեաց ես առ 'ի քէն ակն ունէի առաւել՝
Քան զոր կասկած երկիւղալից տայ քեզ զինէն գանգատել:

ՊԱՒԼԻՆԷ

Ընդ իմ խմբ կալայց շընորհ՝ չեւ ընկալեալ ինչ 'ի քէն:
Քրիստոնէից բարք անյողդողդ քաջածանօթ յոյժ ինձ են.

Dans l' obstination jusqu' au bout il demeure :
Vouloir son repentir, c' est ordonner qu' il meure.

FÉLIX

Sa grâce est en sa main, c' est à lui d' y rèver.

PAULINE

Faites-la tout entière.

FÉLIX

Il la peut achever.

PAULINE

Ne l' abandonnez pas aux fureurs de sa secte.

FÉLIX

Je l' abandonne aux lois, qu' il faut que je respecte.

PAULINE

Est-ce ainsi que d' un gendre un beau-père est l' appui ?

FÉLIX

Qu' il fasse autant pour soi comme je fais pour lui.

PAULINE

Mais il est aveuglé.

FÉLIX

Mais il se plaît à l' être.
Qui chérit son erreur ne la veut pas connaître.

PAULINE

Mon père, au nom des dieux . . .

FÉLIX

Ne les réclamez pas,
Ces dieux dont l' intérêt demande son trépas.

PAULINE

Ils écoutent nos voeux.

FÉLIX

Hé bien ! qu' il leur en fasse.

Սակայն եւ խիստ՝ որչափ վեհանձն արիութեամբ գերագոյ .
Ցաւքդ անողոք ըզտարփածուիդ գերեն ըզսիրտ 'ի սէր քո :
Զիցէ ինձ չատ կորուստ քոյին , պա՞րտ իցէ զքեզ տալ 'ի նուէր՝
Ըսպաս տարեալ նախանձորդիս որ ըլքանէն ըզքո սէր ,
Եւ ծիգն 'ի ջան առաքինի բերեալ եւ գութ անխընայ՝
Զնա 'ի մահուն թափել ժանեաց , տալ զքեզ 'ի գիրկըս նորա :

ՓԱԲԻԱՆՈՍ

Թող զապաշնորհ զայդ ազգատոհմ 'ի հաճոյս անդըր բաղդին .
Նա , թէ կամի , զհայր ընդ դըստեր եւ ըզփեսայ ընդ հարսին
Եւ զՊոլիկտոս ընդ Փելիքսի ածցէ 'ի սէր հաշտութեան .
Իսկ դըժընդակ քոյոց ծըգանցդ իմ ակն ունիս դու փոխան :

ՍԵՒԵՐՈՍ

Ըզցանկալին ինձ ըզպարծանս՝ զի հոգին այն գեղանի
Տեսցէ զՍեւեր զուգապատիւ իւր եւ իւրեան արժանի ,
Եւ զի նա էր ինձ վայելուչ , այլ դից հրամանք դիմամարտ
Զխղճս 'ի դերեւ համեալ սըրտիս՝ անիրաւին տարապարտ :

ՓԱԲԻԱՆՈՍ

Մի դու զերկնից բառնար բողոք եւ մի զբաղդին զըրկանաց ,
Այլ զոր քեզէն անձամբ անձին նիւթես չարիս՝ յայն հայեաց .
Քաջ մըտախոհ լեր , տէր , 'ի վտանգն յոր դիմագրաւ արշաւես ,
Զայր քրիստոնեայ կեցուցանել յանդըգնաբար թէ իշխես .
Մինթէ չգիտես զիարդ աղանդդ այդ ամպարիշտ եւ մոլի
Է եւ եղեւ ինքնակալին միշտ Դեկոսի ատելի :
Գուցէ եղեռնըդ մեծ գրեսցի յաններելի քեզ ոճիր ,
Եւ 'ի շնորհաց նորա 'ի սպառ անկցիս չարեաւ տարագիր :

ՍԵՒԵՐՈՍ

Իցեն խըրատքդ այդ փոքրոգի վատաց 'ի ճահ խուժանին :
Բաղդն իմ եւ կեանք թէ կան Դեկեայ ինքնակալի 'ի բըռին ,
Այլ եմ դեռ եւըս Սեւերոս , եւ նորայն մեծ զօրութիւն

Ne peut rien sur ma gloire, et rien sur mon devoir.
Ici l' honneur m' oblige, et j' y veux satisfaire ;
Qu' après le sort se montre ou propice ou contraire,
Comme son naturel est toujours inconstant,
Périssant glorieux, je périrai content.
Je te dirai bien plus, mais avec confidence,
La secte des chrétiens n' est pas ce que l' on pense :
On les hait ; la raison, je ne la connais point ;
Et je ne vois Décie injuste qu' en ce point.
Par curiosité j' ai voulu les connaître :
On les tient pour sorciers dont l' enfer est le maître ;
Et sur cette croyance on punit du trépas
Des mystères secrets que nous n' entendons pas.
Mais Cérès Éleusine, et la bonne déesse,
Ont leurs secrets comme eux à Rome et dans la Grèce ;
Encore impunément nous souffrons en tous lieux,
Leur Dieu seul excepté, toute sorte de dieux :
Tous les monstres d' Égypte ont leurs temples dans Rome ;
Nos aïeux à leur gré faisaient un dieu d' un homme ;
Et, leur sang parmi nous conservant leurs erreurs,
Nous remplissons le ciel de tous nos empereurs :
Mais, à parler sans fard de tant d' apothéoses,
L' effet est bien douteux de ces métamorphoses.
Les chrétiens n' ont qu' un Dieu, maître absolu de tout,
De qui le seul vouloir fait tout ce qu' il résout :
Mais, si j' ose entre nous dire ce qu' il me semble,
Les nôtres bien souvent s' accordent mal ensemble ;
Et, me dût leur colère écraser à tes yeux,
Nous en avons beaucoup pour être de vrais dieux.
Peut-être qu' après tout ces croyances publiques
Ne sont qu' inventions de sages politiques,
Pour contenir un peuple, ou bien pour l' émouvoir,
Et dessus sa faiblesse affermir leur pouvoir.
Enfin chez les chrétiens les moeurs sont innocentes,
Les vices détestés, les vertus florissantes ;
Jamais un adultère, un traître, un assassin ;
Jamais d' ivrognerie, et jamais de larcin ;
Ce n' est qu' amour entre eux, que charité sincère ;
Chacun y chérit l' autre, et le secourt en frère :
Ils font des voeux pour nous qui les persécutons ;
Et, depuis tant de temps que nous les tourmentons,
Les a-t-on vus mutins ? les a-t-on vus rebelles ?

Չունի իշխել իմոյ պատուոյս եւ ոչ պարտուցս իմ համբուն ։
Հարկ է լինել զայն զոր յինէն պատուին իմ արդ պահանջէ ,
Եւ բաղդն ապա ըստ յեղյեղուկ կոյր հաճոյիցն իւր 'ի բնէ
Ինձ օժընդակ կամ ոխերիմ թէ յարիցէ հակառակ ,
Տաց մըտադիւր զանձն իմ 'ի մահ փառաց՝ քաջի յաղթանակ ։
Նա՝ զառաւելն իսկ ասացից , խորհըրդաբար թէ լսես ․
Ոչ է աղանդըդ քրիստոնեանց որ ինչ կարծին այլապէս ․
Ատելիք են , սակայն առ ի՞նչ՝ զայն ես երբէք ոչ լուայ ․
Եւ յայսմ եւեթ անիրաւեալ Դեկոս 'ի զուր խըստանայ ։
Եղեն երբեմն իղձք հեռաղօտք ինձ առ 'ի խոյզ ճըշմարտին ․
Կախարդասարք նոքա դժոխոց արբանեակք կիւսք համարին ․
Եւ որ պաշտին 'ի նոցանէ գաղտնեաց խորհուրդք մեզ անհաս ,
Նովին կարծեօք՝ մահու չարաւ կըրեն ըզխիստ պատուհաս ։
Այլ Ելեւսեանըն Դեմետրեայ եւ Դիցուհւոյն Բարութեանց
Ո՞չ եւ 'ի Հռոմ եւ առ Հելլենս տօնք նոյնպիսիք են գաղտնեաց ․
Ո՞չ եւ 'ի մէնջ է ընդ հանուր ներեալ պաշտօն զերագոյն
Դից բիւրազգի անպատուհաս , բաց 'ի նոցա Աստուծոյն ․
Հրէշից բնաւից Եգիպտոսի տաճարք 'ի Հռոմ կառուցան ․
Եւ ըստ հաճոյս նախնեաց մերոց մարդիկ ընդ դիս դասեցան ,
Եւ ընդ արեան նոցա վրիպակ իւրեանց սերեալ մինչ առ մեզ ,
Լընումք յամբոխ ինքնակալաց մերոց զերկնից ասպարէզ ․
Այլ՝ թող զի պարզ իսկ ասացից , աստուածարեալըն պարուն
Կարի յերկրպայս այլակերպեալդ այդ ինձ թըւի դիւթութիւն ։
Քրիստոնէից է մի Աստուած՝ տիեզերաց ինքնակալ,
Յոր միայնոյ կամաց համայնք յաւիտենից առին կալ.
Եւ թէ օրէն է զոր խորհիմըս քեզ ասել 'ի գաղտնիս ,
Դիք մեր յաճախ անմիաբանք են ընդ իրեարս 'ի հերձիս ․
Եւ թէպէտ սաստ իսկ 'ի նոցունց հասցէ ինձ գոլ չանթահար ,
Այլ ասացից ․ յոլովք առ մեզ պաշտին աստուածք թարմատար ։
Իցեն թերեւս այն ամենայն աւանդք կրօնից յօդուածոյ
Քաղաքագէտ իմաստութեան գիւտք բազմարուեստ հանճարոյ,
Առ 'ի նուաճել այնու զռամիկն եւ կամ ածել 'ի յորդոր ,
Եւ 'ի նոցին պարզմըտութեան առնել զիւրեանց սաստ հըզօր ։
Լուր 'ի վերջէ ․ քրիստոնէից յոյժ անարատ է կենցաղ ,
Բարեաց 'ի գործըս բարգաւաճ , յախտից անբիծ անշաղախ ․
Չեն առ նոսա ոչ աւազակք , ոչ շունք եւ ոչ գողք հատու ,
Ոչ դաւաճան մատնիչ եւ ոչ արբշիռ շըւայտ գինըմպու ․
Համակ 'ի սէր անկեղծ վառեալ, համակ 'ի գութ 'ի գորով,
Սիրեն զիրեարս , որպէս եղբայր ընդ եղբօր ձեռըն տալով ․
Վասն հալածչաց իսկ իւրեանց միշտ նոքա բարիս մեզ մաղթեն,
Եւ 'ի դարուց հետէ լըկեալք , չեն ապըստամբք , ոչ հեստեն ։
Հաւատարիմ քան ըզնոսա զօրք կայսերաց մերոց չիք ․

Nos princes ont-ils eu des soldats plus fidèles?
Furieux dans la guerre, ils souffrent nos bourreaux;
Et, lions au combat, ils meurent en agneaux.
J'ai trop de pitié d'eux pour ne les pas défendre.
Allons trouver Félix; commençons par son gendre;
Et contentons ainsi, d'une seule action,
Et Pauline, et ma gloire, et ma compassion.

Գոռք 'ի մարտի , եւ առ գահճօք մերովք հըլլուք կան լռիկ ,
Եւ մեռանին որպէս գառինք առիւծքն հըզօրք 'ի մարտի :
Չկարեմ չօգնել նոցին , զի սիրտ իմ ընդ նոսա մորմոքի :
Օ՜ն , առ փեղկս եկ երթիցուք , նախ ըղփեայն խնամելով
ԸզՊաւլինէ համանգամայն հաճել, զիմ փառս եւ զգորով :

ACTE CINQUIÈME

SCÈNE I.

FÉLIX, ALBIN, CLÉON.

FÉLIX

Albin, as-tu bien vu la fourbe de Sévère ?
As-tu bien vu sa haine ? et vois-tu ma misère ?

ALBIN

Je n' ai vu rien en lui qu' un rival généreux,
Et ne vois rien en vous qu' un père rigoureux.

FÉLIX

Que tu discernes mal le coeur d' avec la mine !
Dans l' âme il hait Félix et dédaigne Pauline ;
Et, s' il l' aima jadis, il méprise aujourd' hui
Les restes d' un rival trop indignes de lui.
Il parle en sa faveur, il me prie, il menace,
Et me perdra, dit-il, si je ne lui fais grâce ;
Tranchant du généreux, il croit m' épouvanter :
L' artifice est trop lourd pour ne pas l' éventer.
Je sais des gens de cour quelle est la politique,
J' en connais mieux que lui la plus fine pratique.
C' est en vain qu' il tempête et feint d' être en fureur :
Je vois ce qu' il prétend auprès de l' empereur.
De ce qu' il me demande il m' y ferait un crime ;
Épargnant son rival, je serais sa victime ;
Et s' il avait affaire à quelque maladroit,
Le piége est bien tendu, sans doute il le perdroit :
Mais un vieux courtisan est un peu moins crédule ;
Il voit quand on le joue, et quand on dissimule ;

ՀԱՆԴԻՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

ՓԵԼԻՔՍ, ԱԼԲԻՆՈՍ, ԿԼԷՈՎՆ

ՓԵԼԻՔՍ

Տեսե՞ր դու արդ, իմ Ալբինէ, զնենգ Սեւերի խորամանկ.
Տեսե՞ր զնորին քէն ոխակալ, եւ զաղխոյցն իմ վըտանգ ։

ԱԼԲԻՆՈՍ

Ոչ ես 'ի նմա զայլ ինչ տեսի՝ բայց նախանձորդ ոք վեհանձն,
Եւ 'ի քեզ ոչ տեսանեմ այլ՝ բայց հայր մոլեալ 'ի նախանձ ։

ՓԵԼԻՔՍ

Ընդ երեւոյթ դիմաց ու 'նդ սիրտ չգիտես խորշել, իսկ դու բնաւ.
Նա 'ի սըրտէ ատեայ զՖելիքս, արհամարհէ զՊաւլինեաւ,
Ում թէ երբեմըն տարփացեալ՝ այլ արդ խոտէ անգոսնէ
Իբր անարժան իւր ըզմնացուած նախանձորդին իւր ըզնէ ։
Նա Պոլիկտեայ արդ բարեխօս՝ եւ աղերսէ եւ սպառնայ
Կորուսանել զիս, թէ չանսամ շնորհել ինքեան ես ըզնա.
Ի մեծամեծըս կատարել՝ կարծէ ածել ինձ խըրտուիլ.
Ծանծաղ են յոյժ հնարիցըն խորք, դիւրանըշմար 'ի տեսիլ ։
Զեն անծանօթ ինձ արքունեաց քաղաքագէտ այդ հընարք,
Ճարտար քան զինքն եմ 'ի վարել նոքօք ուր ինձ տացի հարկ ։
Զուր որոտայ, զուր մոլեգնի 'ի չարահնար 'ի կեղծիս,
Քաջ նըշմարեմ զոր առ կայսեր հնարի նիւթել ինձ չարիս.
Զոր առ յինէն խընդրէ 'ի շնորհ, զայն ինձ քսեցէ 'ի յանցուած.
Յատոխ նորին եթէ խնայեմ՝ 'ի սպանդ նըմին ես մատեայց ։
Եթէ ընդ այլ ոք թերատես էին նորա իղձ՝ անշուշտ
Յոյժ քաջադէպ լարեալ են հաղըքն յանպուրծ նորին 'ի կորուստ.
Այլ յարքունիս հնացեալ դրանիկ չանսայ լինել դիւրադայթ,
Քաջ ըզդիմակըս նըկատեալ եւ ըզկեղծեաց որոգայթ.

Et moi j'en ai tant vu de toutes les façons,
Qu'à lui-même au besoin j'en ferais des leçons.

ALBIN

Dieux! que vous vous gênez par cette défiance!

FÉLIX

Pour subsister en cour c'est la haute science.
Quand un homme une fois a droit de nous haïr,
Nous devons présumer qu'il cherche à nous trahir:
Toute son amitié nous doit être suspecte.
Si Polyeucte enfin n'abandonne sa secte,
Quoi que son protecteur ait pour lui dans l'esprit,
Je suivrai hautement l'ordre qui m'est prescrit.

ALBIN

Grâce, grâce, seigneur! que Pauline l'obtienne!

FÉLIX

Celle de l'empereur ne suivrait pas la mienne;
Et, loin de le tirer de ce pas dangereux,
Ma bonté ne ferait que nous perdre tous deux.

ALBIN

Mais Sévère promet...

FÉLIX

Albin, je m'en défie,
Et connais mieux que lui la haine de Décie;
En faveur des chrétiens s'il choquait son courroux,
Lui-même assurément se perdrait avec nous.
Je veux tenter pourtant encore une autre voie.
Amenez Polyeucte [1]; et si je le renvoie,
S'il demeure insensible à ce dernier effort,
Au sortir de ce lieu qu'on lui donne la mort.

1 *A Cléon.*

Ընդ բազմազան իրաց ընդ փորձ անցեալ՝ հըմուտ եմ այնպէս ,
Զի եթէ դէպ տայցէ՝ գիտեմ վարժապետել նըմին ես :

ԱԼԲԻՆՈՍ

Բա՛րէ , զի՞ քեզ , զի՞ տարապարտ կասկածանօք տագնապիս :

ՓԵԼԻՔՍ

Այս գիտութիւն է բարձրագոյն ոյց կամք են կալ յարքունիս :
Որոց գամ մի առելութեան ընդ մեզ կալեալ է պատճառ ,
Անկ եւ պարտ իսկ է հաւատալ զի դարմանին մեզ 'ի սպառ .
Մըտերմութեան նոցա 'ի ցոյց եւ 'ի բան չեք վըստահել :
Ցորչափ յաղանդն իւր յամառեալ կայ Պոլիկտոս 'ի հեստել՝
Թող զոր կամի պաշտպան նորա երկնէ խորհուրդս 'ի սըրտի ,
Ինձ յայտնապէս պատկառ կալ հարկ է հրամանաց արքունի :

ԱԼԲԻՆՈՍ

Գըթութիւն , ով տէր , գըթութիւն խընդրէ 'ի քէն Պաւլինէ :

ՓԵԼԻՔՍ

Բայց ոչ ապա եւ ինքնակալն արդեօք լուր իս գըթայցէ .
Ի մեծասակար հետոցն ըզնա ընկըրկել ոչ կարացեալ ,
Ներումն այն իմ մեզ երկոցուն ածցէ կորուստ հաւասար :

ԱԼԲԻՆՈՍ

Բայց խոստանայ Սեւեր ...

ՓԵԼԻՔՍ

Այլին , ոչ հաւատամ ես նըմա :
Քաջ խելամուտ եմ ես քան զինքն առելութեանըն Դեկեայ .
Քրիստոնէից թէ թեւարկեալ՝ զնորա ցասումըն դըրդէ ,
Ինքն եւս հանգոյն մեզ աներկըբայ կորուստ ըզնոյն կորիցէ :
Այլ փորձ մի եւս առցուք փորձել զիջանելով տակաւին :
Այսր , աղէ [1] , ած ըզՊոլիկտոս , տեսցուք ըզնա վերըստին :
Թէ յամառեալ մըտօք չըտայ յետին ճըգանցս իմ տեղի ,
Ընդ ելանելն աստի՝ 'ի մահ պատուհասին վարեսցի :

[1] Առ Ալբին :

ALBIN

Votre ordre est rigoureux.

FÉLIX

Il faut que je le suive,
Si je veux empêcher qu'un désordre n'arrive.
Je vois le peuple ému pour prendre son parti;
Et toi-même tantôt tu m'en as averti:
Dans ce zèle pour lui qu'il fait déjà paraître,
Je ne sais si longtemps j'en pourrais être maître;
Peut-être dès demain, dès la nuit, dès ce soir,
J'en verrais des effets que je ne veux pas voir;
Et Sévère aussitôt, courant à sa vengeance,
M'irait calomnier de quelque intelligence.
Il faut rompre ce coup, qui me serait fatal.

ALBIN

Que tant de prévoyance est un étrange mal!
Tout vous nuit, tout vous perd, tout vous fait de l'ombrage.
Mais voyez que sa mort mettra ce peuple en rage;
Que c'est mal le guérir que le désespérer.

FÉLIX

En vain après sa mort il voudra murmurer;
Et, s'il ose venir à quelque violence,
C'est à faire à céder deux jours à l'insolence:
J'aurai fait mon devoir, quoi qu'il puisse arriver.
Mais Polyeucte vient, tâchons à le sauver.
Soldats, retirez-vous, et gardez bien la porte.

ԱԼԲԻՆՈՍ

Խիստ են հրամանքն ։

ՓԵԼԻՔՍ

Այլ անվրէպ տանել 'ի գլուխ զայն հարկ է .
Թէ ո՛չ՝ շըշուկ ամպրոպայնոյ ինձ հուպ ընդ հուպ հասանէ ։
Ամբոխն արդէն 'ի գութ շարժեալ խլրտի նըմին կարեկիր ,
Որպէս եւ դու խոկ ինձ կանխաւ գուշակօրէն ազդէիր .
Ի նախանձուն նոցա մոլեալ, զորոյ այժմէն տան ըզցոյց ,
Ոչ գիտեմ իբր ինձ ըզնորին լիցի նուաճել ըզզայրոյթ .
Թերեւս այգուն , թերեւս ըզցայգ , թերեւս աւուրս ընդ երեկ
Հասցեն նորին դառն արգասիք ինձ 'ի սակուռն աչարեկ .
Եւ Սեւերեայ 'ի վրէժ քինուն իւր փութացեալ 'ի քըլախս ,
Զինէն բարուրըս կըցեսցէ զոլ համախոհ 'ի չարիս ։
Աշխատաւէր իւր հարուածոյն զառաջս առնուլ հարկ է մեզ ։

ԱԼԲԻՆՈՍ

Աչէսք քանի՜ տարօրինակ կասկած այդքան կանխատես .
Համայն վըտանգ , համայն կորուստ , համայն ինչ քեզ երկեղուտ ։
Այլ տես զի մի՛ մահուամբ նորա գըրգիւ խուժանն 'ի զայրոյթ .
Չէ այդ դարման անել չարեաց , այլ զայրացուք յուսահատ ։

ՓԵԼԻՔՍ

Այլ յետ մահուն՝ զուր խուժանին լիցի յուզումն 'ի գանգատ .
Իսկ թէ ժըպրհեալ յանդըգնեսցի 'ի բըռնութիւն մոլեկան ,
Շատ իսկ իցեն աւուրք երկու ընորհեալ նոցա խեռութեան ։
Որ ինչ գալոցն է եկեսցէ , մեք զոր պարտիմքս արասցուք ։
Այլ արդ նա ինքն ահա Պօլիկտ . ըզնա փըրկել ջանասցուք ։
Տեղի տուր տուք , զօրականք , եւ զգուշասջիք 'ի պահ դրաց ։

SCÈNE II.

FÉLIX, POLYEUCTE, ALBIN.

FÉLIX

As-tu donc pour la vie une haine si forte,
Malheureux Polyeucte? et la loi des chrétiens
T' ordonne-t-elle ainsi d' abandonner les tiens?

POLYEUCTE

Je ne hais point la vie, et j' en aime l' usage,
Mais sans attachement qui sente l' esclavage,
Toujours prêt à la rendre au Dieu dont je la tiens;
La raison me l' ordonne, et la loi des chrétiens;
Et je vous montre à tous par là comme il faut vivre,
Si vous avez le coeur assez bon pour me suivre.

FÉLIX

Te suivre dans l' abime où tu te veux jeter?

POLYEUCTE

Mais plutôt dans la gloire où je m' en vais monter.

FÉLIX

Donne-moi pour le moins le temps de la connaitre;
Pour me faire chrétien, sers-moi de guide à l' être;
Et ne dédaigne pas de m' instruire en ta foi,
Ou toi-même à ton Dieu tu répondras de moi.

POLYEUCTE

N' en riez point, Félix, il sera votre juge;
Vous ne trouverez point devant lui de refuge;
Les rois et les bergers y sont d' un même rang:
De tous les siens sur vous il vengera le sang.

FÉLIX

Je n' en répandrai plus, et, quoi qu' il en arrive,
Dans la foi des chrétiens je souffrirai qu' on vive;
J' en serai protecteur.

ՏԵՍԻԼ Բ·

ՓԵԼԻՔՍ, ՊՕԼԻԿՏՈՍ, ԱԼԲԻՆՈՍ

ՓԵԼԻՔՍ

Ա՞յդչափ ուրեմըն, Պօլիկտոս, տաղտուկ է քեզ 'ի կենաց.
Զա՞յդ քեզ օրէնք քրիստոնէիցըդ հրամայեն, ով թըշուառ,
Անկարեկիր սըրտիւ փակել առ քոյդ ըզգութ քո 'ի սպառ:

ՊՕԼԻԿՏՈՍ

Ոչ 'ի կենաց տաղտուկ է ինձ. եւ ես ինքնին յարգեմ զայն,
Այլ ոչ զօրէն պաշտելոց տամ զիս 'նըմա գերութեան.
Զօնեմ սիրով զայն Աստուծոյ յորմէ առեալ եմ 'ի նուէր.
Բանն ինքնին զայս ինձ հրամայէ, այս Քրիստոսի է պատուէր.
Եւ ես ցուցից ձեզ համօրէն որպէս արժան իցէ կեալ,
Միայն թէ սիրտ յօժար 'ի ձեզ գըտցի հետոցս ըզհետ գալ:

ՓԵԼԻՔՍ

Հետոցդ ըզհե՞տ գալ գահավէժ 'ի վիհ յոր զինքնըդ հոսես:

ՊՕԼԻԿՏՈՍ

Նա մանաւանդ փառաց 'ի կայս յոր հուպ ընդ հուպ ելից ես:

ՓԵԼԻՔՍ

Տուր ինձ ապա գէթ ժամանակ զոր աւանդեան ուսանել.
Վարժապետեա ինձ, թէ ցանկաս զիս քրիստոնեայ տեսանել.
Մի հրաժարեր, ո Պօլիկտէ, 'ի կրօնըս քո վարժել զիս,
Ապ' եթէ ոչ՝ համար ընդ իմ 'ի յԱստուծոյդ պահանջիս:

ՊՕԼԻԿՏՈՍ

Մի դու, Փելիքս, մի զնա ծաղրեր, որ դատելոցն է ըզքեզ.
Եւ յերեսաց նորա քեզ չիք ուրեք թագուստ յոր կեցցես.
Ընդ թագաւոր եւ ընդ հովիւ յայնմ ատենի չիք խըտիր.
Ի քէն Աստուածն իմ անդ իւրոցն արեան լիցի վրէժխընդիր:

ՓԵԼԻՔՍ

Ոչ եւս հեղից զարիւն նոցա. գայցէ որ ինչ է 'ի գալ՝
Քրիստոնէից ներեալ յինէն իւրեանց կրօնից պատկառ կալ.
Ես ինքն եղէց նոցա պաշտպան:

POLYEUCTE

Non, non, persécutez,
Et soyez l' instrument de nos félicités :
Celle d' un vrai chrétien n' est que dans les souffrances ;
Les plus cruels tourments lui sont des récompenses.
Dieu, qui rend le centuple aux bonnes actions,
Pour comble donne encor les persécutions:
Mais ces secrets pour vous sont fâcheux à comprendre:
Ce n' est qu' à ses élus que Dieu les fait entendre.

FÉLIX

Je te parle sans fard, et veux être chrétien.

POLYEUCTE

Qui peut donc retarder l' effet d' un si grand bien?

FÉLIX

La présence importune...

POLYEUCTE

Et de qui? de Sévère?

FÉLIX

Pour lui seul contre toi j' ai feint tant de colère:
Dissimule un moment jusques à son départ.

POLYEUCTE

Félix, c' est donc ainsi que vous parlez sans fard?
Portez à vos païens, portez à vos idoles
Le sucre empoisonné que sèment vos paroles.
Un chrétien ne craint rien, ne dissimule rien ;
Aux yeux de tout le monde il est toujours chrétien.

FÉLIX

Ce zèle de ta foi ne sert qu' à te séduire,
Si tu cours à la mort plutôt que de m' instruire.

POLYEUCTE

Je vous en parlerais ici hors de saison ;
Elle est un don du ciel, et non de la raison ;

ՊՈԼԻԿՏՈՍ

Մի՛ դու, այլ լեր հալածիչ.
Երջանկութեան մերոյ օճան գոլ հրաժարես դու առ ի՞նչ.
Քրիստոնէիցըս ճշմարիտ երջանկութիւն է 'ի կրել.
Ի պարգեւի մասին են մեզ վիշտք եւ աղէտք խըստամբեր:
Որ ըզվաստակըս վարձատրէ՛ն բիւրապատիկ մեզ Աստուած,
Նա զհալածիչս յարուցանէ 'ի լրումն իւրոց պարգեւաց.
Այլ այսքի՛կ դըժուարահաս են ձեզ խորհուրդք եւ գաղտնի,
Զորս ընտրելոց եւեթ իւրոց առնէ Աստուած հոլանի:

ՓԵԼԻՔՍ

Անպատրըւակ ասեմ քեզ արդ. ցանկամ լինել քրիստոնեայ:

ՊՈԼԻԿՏՈՍ

Եւ զի՞նչ ըզքեզ արգելուցու չառնել զոր սիրտ քո անձկայ:

ՓԵԼԻՔՍ

Ինձ ահարկու է ասանոր . . .

ՊՈԼԻԿՏՈՍ

Ո՞ այն, արդեօք Սեւերոս:

ՓԵԼԻՔՍ

Վասըն նորա ցասումն այսչափ քեզ պատճառիմ բըռնազբօս.
Եւ դու վայրի՛կ մի պատճառեաց մինչեւ 'ի բաց մեկնեսցի:

ՊՈԼԻԿՏՈՍ

Ա՛յսպէս ուրեմն անպատրըւակ Փելիքս առ իս արդ խօսի.
Զայդ քո աղու հրապոյրս առ քոյս եւ առ քո դիս վարեսջի՛ր:
Այր քրիստոնեայ ոչ երկընչի, չածի 'ի հնարըս պատիր.
Տիեզերաց յայտ յանդիման կացցէ նա միշտ քրիստոնեայ:

ՓԵԼԻՔՍ

Նախանձ կրօնիցըդ քոց խրատտու քեզ պատահէ խաբեբայ,
Թէ զմահ ընտրես դու առաւել քան ինձ վարժիչ գոլ կրօնից:

ՊՈԼԻԿՏՈՍ

Քեզ հաւատոց ճառք տարաժամ բանք են այժմիկ զանհասից.
Չէ այն մըտաց հանճարոյ տուրք, այլ երկնածիր պարգեւաց:

Et c'est là que bientôt, voyant Dieu face à face,
Plus aisément pour vous j'obtiendrai cette grâce.

FÉLIX

Ta perte cependant me va désespérer.

POLYEUCTE

Vous avez en vos mains de quoi la réparer ;
En vous ôtant un gendre, on vous en donne un autre
Dont la condition répond mieux à la vôtre ;
Ma perte n'est pour vous qu'un change avantageux.

FÉLIX

Cesse de me tenir ce discours outrageux.
Je t'ai considéré plus que tu ne mérites ;
Mais, malgré ma bonté, qui croît plus tu l'irrites,
Cette insolence enfin te rendrait odieux,
Et je me vengerais aussi bien que nos dieux.

POLYEUCTE

Quoi! vous changez bientôt d'humeur et de langage!
Le zèle de vos dieux rentre en votre courage!
Celui d'être chrétien s'échappe! et par hasard
Je vous viens d'obliger à me parler sans fard!

FÉLIX

Va, ne présume pas que, quoi que je te jure,
De tes nouveaux docteurs je suive l'imposture.
Je flattais ta manie, afin de t'arracher
Du honteux précipice où tu vas trébucher ;
Je voulais gagner temps pour ménager ta vie
Après l'éloignement d'un flatteur de Décie :
Mais j'ai trop fait d'injure à nos dieux tout-puissants ;
Choisis de leur donner ton sang, ou de l'encens.

POLYEUCTE

Mon choix n'est point douteux. Mais j'aperçois Pauline :
O ciel!

Անդ 'ի վայելս իմ 'ի մօտոյ դէմ յանդիման յԷնն Աստուած ,
Ինձ դիւրագոյն լիցի ըզշնորհդ ընդունել քեզ 'ի նմանէ :

ՓԵԼԻՔՍ

Սակայն քոյդ մահ , քոյդ բաժանումն յուսակտուր զիս առնէ :

ՊՈԼԻԿՏՈՍ

Սակայն մնասուդ քո այդ դարման կայ քեզ պատրաստ 'ի ձեռին .
Ըզփեսայիդ կորուսելոյ լըցցէ միւս ումն ըզտեղին .
Սատրճանան իսկ վայելուչ քան զիս քոյումըդ յաւէտ ,
Կորուստն իմ քեզ չիցէ 'ի տոյժ , այլ տուրեւառ շահաւէտ :

ՓԵԼԻՔՍ

Շատ է արդ , մի թըշնամանաց բանիւք բերկիր դու առ իս :
Շուք եւ պատիւ գըտեր յինէն գեր քան ըզքո արժանիս .
Այլ հեզութիւն երկայնամիտ ցարդ խեռութեանդ յաղթական ,
Ցասկոտութիւն փոխի 'ի լուր ժըպիրհ բանից քոց այդքան .
Եւ հատուցես դու ինձ ըզվրէժ անարգանաց զիմ եւ զդից :

ՊՈԼԻԿՏՈՍ

Բա՜րէ , առ ի՞նչ այդ փոփոխումն յանկարծ լեզուի քո եւ կրից .
Նախանձ փառաց դից քոց թերեւս յուզէ ըզքեզ վերըստին ,
Եւ քրիստոնեան կրօնից քեզ տենչ 'ի մոռացօնըս լինին .
Միթէ յինէ՞ն ինչ ըստիպեալ անպատրուակ խօսէիր :

ՓԵԼԻՔՍ

Թող անդր 'ի բաց , եթէ երդմնի իսկ քեզ եղէց՝ մի խաբիր ,
Վարդապետացըդ նորահնար կեղծեաց լըսող ես ոչ գոմ :
Մոլեռնախանձ ըղձիցըդ քոց հայթայթէի զայն շողոմ ,
Ընկըրկելոյ զքեզ 'ի վախիցն , յոր դիմեալ գնաս ճեպըշտապ .
Ի փըրկութիւն քո հնարէի առնուլ դեռ եւըս պարապ ,
Մինչ 'ի հրաժեշտ աստի 'ի բաց որ առ Դեկեայն քըմնոյ .
Բայց շատ իսկ ցարդ ընդ անարգուս ամենակալ դիցն եղէ :
Արդ ընտրեսջիր՝ կամ զքո արիւն , կամ խունկ 'ինուէր տալ (նոցա :

ՊՈԼԻԿՏՈՍ

Քաջ իսկ գիտես զոր ընտրեցեմ : Այլ Պաւլինէ այսըր գայ .
Ո՜վ Տէր :

SCÈNE III.

FÉLIX, POLYEUCTE, PAULINE, ALBIN.

PAULINE

Qui de vous deux aujourd'hui m'assassine?
Sont-ce tous deux ensemble, ou chacun à son tour?
Ne pourrai-je fléchir la nature, ou l'amour?
Et n'obtiendrai-je rien d'un époux, ni d'un père?

FÉLIX

Parlez à votre époux.

POLYEUCTE

Vivez avec Sévère.

PAULINE

Tigre, assassine-moi du moins sans m'outrager.

POLYEUCTE

Mon amour, par pitié, cherche à vous soulager;
Il voit quelle douleur dans l'âme vous possède,
Et sait qu'un autre amour en est le seul remède.
Puisqu'un si grand mérite a pu vous enflammer,
Sa présence toujours a droit de vous charmer:
Vous l'aimiez, il vous aime; et sa gloire augmentée...

PAULINE

Que t'ai-je fait, cruel, pour être ainsi traitée,
Et pour me reprocher, au mépris de ma foi,
Un amour si puissant que j'ai vaincu pour toi?
Vois, pour te faire vaincre un si fort adversaire,
Quels efforts à moi-même il a fallu me faire;
Quels combats j'ai donnés pour te donner un coeur
Si justement acquis à son premier vainqueur;
Et, si l'ingratitude en ton coeur ne domine,
Fais quelque effort sur toi pour te rendre à Pauline:
Apprends d'elle à forcer ton propre sentiment;

ՏԵՍԻԼ Գ.

ՓԵԼԻՔՍ, ՊՈԼԻԿՏՈՍ, ՊԱՒԼԻՆԷ, ԱԼԲԻՆՈՍ

ՊԱՒԼԻՆԷ

Ի ձէնջ յերկոցունց ո՞ դաշիճ այսօր ինձ կացցէ.
Երկոքի՞նդ իսկ միանգամայն, թէ մէն ուրոյն ինձ, ասէ:
Զիցէ՞ հընար յողոք անել ինձ ըզգթութիւն կամ ըզսէր,
Եւ 'ի հօրէ եւ յամուսնոյ մնա՞յ ինձ մերժումն անդրուէր:

ՓԵԼԻՔՍ

Ընդ ամուսնոյ քում խօսեսջիր:

ՊՈԼԻԿՏՈՍ

Ընդ Սեւերի դու կեցցես:

ՊԱՒԼԻՆԷ

Ա՜յ անողորմ, հայր զիս ըսպան քան նախատել զիս այդպէս:

ՊՈԼԻԿՏՈՍ

Սէր 'ի գորով շարժեալ 'ի յիս հնարի ըզքեզ ըմփոփել.
Զեմ անծանօթ որոց 'ի քեզ ըռնաման ցաւք անընդել.
Ի գիւր նոցին սէր այլ իցէ սրբտիդ միակ 'ի սփոփանս.
Եւ որ վառեացն ըզքեզ երբեմն յիւր արժանեացն 'ի տարփանս,
Նոյն միշտ հըզօր 'ի յողոքել ըզսիրտ քո՝ քեզ կացցէ մերձ.
Դու զնա երբեմն, արդ ինքն ըզքեզ սիրէ, եւ փառք նորա մեծ...

ՊԱՒԼԻՆԷ

Զի՞նչ մեղայ, ով անագորոյն, զի անխնայեալ յիս այդպէս՝
Հաւատարիմ սիրոյս ընդ հեգն 'ի կըշտամբանս ինձ անես
Ըզնախընծայ տարփից սրտիս, զորս խըզեցի առ քո սէր:
Տես դու քանի՜ք հասին ինձ գոռք եւ ընդ անձին ոգորել,
Առ 'ի կանգնել քեզ յաղթութիւն ընդդէմ հըզօր սոսկիդ.
Քանի՜ ծանունց տարայ վըշտաց առ 'ի ձօնել քեզ ըզսիրտ,
Որ նախադրաւ յաղթականին գոյր իրաւանցըն պահեստ:
Եթէ չիցէ արդ ապաշնորհ եւ ապառում սիրտ զոր կրեսդ,
Խուն մի եւ դու դուն գործեսջիր պահել ըզքեզ Պաւլինեայ.
Ընդդէմ կըրիցդ ուսիր կըքրել, նըմին եւ դու նըմանեա.

Prends sa vertu pour guide en ton aveuglement;
Souffre que de toi-même elle obtienne ta vie,
Pour vivre sous tes lois à jamais asservie.
Si tu peux rejeter de si justes désirs,
Regarde au moins ses pleurs, écoute ses soupirs;
Ne désespère pas une âme qui t'adore.

POLYEUCTE

Je vous l'ai déjà dit, et vous le dis encore,
Vivez avec Sévère, ou mourez avec moi.
Je ne méprise point vos pleurs, ni votre foi;
Mais, de quoi que pour vous notre amour m'entretienne,
Je ne vous connais plus, si vous n'êtes chrétienne.
C'en est assez: Félix, reprenez ce courroux,
Et sur cet insolent vengez vos dieux, et vous.

PAULINE

Ah! mon père, son crime à peine est pardonnable;
Mais s'il est insensé, vous êtes raisonnable:
La nature est trop forte, et ses aimables traits
Imprimés dans le sang ne s'effacent jamais:
Un père est toujours père, et sur cette assurance
J'ose appuyer encore un reste d'espérance.
Jetez sur votre fille un regard paternel:
Ma mort suivra la mort de ce cher criminel;
Et les dieux trouveront sa peine illégitime,
Puisqu'elle confondra l'innocence et le crime,
Et qu'elle changera, par ce redoublement,
En injuste rigueur un juste châtiment:
Nos destins, par vos mains rendus inséparables,
Nous doivent rendre heureux ensemble, ou misérables;
Et vous seriez cruel jusques au dernier point,
Si vous désunissiez ce que vous avez joint.
Un coeur à l'autre uni jamais ne se retire;
Et pour l'en séparer il faut qu'on le déchire.
Mais vous êtes sensible à mes justes douleurs,
Et d'un oeil paternel vous regardez mes pleurs.

FÉLIX

Oui, ma fille, il est vrai qu'un père est toujours père:

Ի կուրութեան քում զուղղութիւն նորին քեզ կալ առաջնորդ.
Կամեաց զի քեւ վերընկալցի նա զքեզ կենաց իւր կցորդ,
Աշախնօրէն կալ միշտ ընդ քեզ եւ հրամանաց քոց հլու։
Իսկ թէ արդար ըղձիցն անլուր արհամարհես դու զայնու,
Գէթ յարտասուս իւր ակնարկեա, հառաչմանց նորին լուր,
Եւ որ սիրէն ըզքեզ՝ դու մի զնա լըքաներ, մի թողուր։

ՊՈԼԻԿՏՈՍ

Այժմ իսկ աջա քեզ ասացի, եւ զնոյն առնում երկրորդել.
Լեր Սեւերեայ դու կենակից, կամ 'ի մահու ինձ ընկեր։
Ոչ զարտասուս քո անգոսնեմ եւ ոչ զանկեղծ քոյին սէրդ.
Սակայն որ զինչ եւ խօսիցի առ իս ըզքէն սէր մեր սերտ,
Ոչ եւս ըզքեզ այլ ճանաչեմ՝ մինչ չեւ իցես քրիստոնեայ։
Շատ է ցայժմայր. առ դու, փեղէքս, դարձեալ ըզսատ քո դըժ-
հան ընդ կառափն անօրինիս ըզվրէժ դիցքոց և զանձին։ (Նեայ.

ՊԱՒԼԻՆԷ

Ո՜հ, հայր, ներեա, աններելի են արդարեւ մեղք դորին,
Այլ թէ մոլի դա խելայեղ՝ դու խոհական ես, դու զգօն.
Մեծ է բնութեան յոյժ զօրութիւն, եւ սիրելի տիպք նորուն
Տըպաւորեալք 'ի բնիկ արեան՝ եղծանելիք չեն երբեք.
Հայր միշտ է հայր. յայս ապաստան՝ չեմ ես 'ի սպառ յուսաբեկ։
Արկ ծնելասէր ակն 'ի յաղէտըս միանգամ դըստեր քո,
Որ հուպ ընդ հուպ մեռցի ըզհետ մահապարտին սիրելւոյ.
Եւ պատուհաս նորա զրեացի անխրաւ յաչս անմահից՝
Արիւն անպարտ խառն ընդ արեան յանցաւորին պատժակից,
Եւ ընդ միոյն՝ մահուամբ երկուց արդարութեանըն պատիժ
Յեղափոխեալ 'ի խըստութիւն մոլեռնախանձ ամբարիշտ։
Ի քէն իսկ բաղդք մեր ընդ իրեարըս զօդեցան անմեկին,
Երանելիք 'ի միասին գոլ կամ թըշուառք երկոքին.
Ի խուժադուժ անգըթութեան 'ի ծայր վերջին դու հասցես,
Թէ զոր ձեռօքըդ զօդեցեր, քակեալ անդրէն բաժանես։
Սիրտ ընդ սըրտի յեռեալ 'ի մի՝ ոչ եւս երբէք բաժանին.
Եւ ոչ քակել ոք կարասցէ՝ թէ չփեռեկէ զայնս ուժգին։
Այլ դու խնայս անպարտակիր ցաւոց լինիս կարեկից,
Եւ յարտասուս իմ հայրաբար հայիս աջա գըթալից։

ՓԵԼԻՔՍ

Դուստր իմ, այո, հայր միշտ է հայր, զայդ ասացեր դու արդար.

Rien n' en peut effacer le sacré caractère ;
Je porte un coeur sensible, et vous l' avez percé.
Je me joins avec vous contre cet insensé.
Malheureux Polyeucte, es-tu seul insensible ?
Et veux-tu rendre seul ton crime irrémissible ?
Peux-tu voir tant de pleurs d' un oeil si détaché ?
Peux-tu voir tant d' amour sans en être touché ?
Ne reconnais-tu plus ni beau-père, ni femme,
Sans amitié pour l' un, et pour l' autre sans flamme ?
Pour reprendre les noms et de gendre et d' époux,
Veux-tu nous voir tous deux embrasser tes genoux ?

POLYEUCTE

Que tout cet artifice est de mauvaise grâce !
Après avoir deux fois essayé la menace,
Après m' avoir fait voir Néarque dans la mort,
Après avoir tenté l' amour et son effort,
Après m' avoir montré cette soif du baptême,
Pour opposer à Dieu l' intérêt de Dieu même,
Vous vous joignez ensemble ! Ah, ruses de l' enfer !
Faut-il tant de fois vaincre avant que triompher !
Vos résolutions usent trop de remise ;
Prenez la vôtre enfin, puisque la mienne est prise.
Je n' adore qu' un Dieu, maître de l' univers,
Sous qui tremblent le ciel, la terre, et les enfers ;
Un Dieu qui, nous aimant d' une amour infinie,
Voulut mourir pour nous avec ignominie,
Et qui, par un effort de cet excès d' amour,
Veut pour nous en victime être offert chaque jour.
Mais j' ai tort d' en parler à qui ne peut m' entendre.
Voyez l' aveugle erreur que vous osez défendre :
Des crimes les plus noirs vous souillez tous vos dieux ;
Vous n' en punissez point qui n' ait son maître aux cieux ;
La prostitution, l' adultère, l' inceste,
Le vol, l' assassinat, et tout ce qu' on déteste,
C' est l' exemple qu' à suivre offrent vos immortels.
J' ai profané leur temple, et brisé leurs autels ;
Je le ferais encor, si j' avais à le faire,
Même aux yeux de Félix, même aux yeux de Sévère,
Même aux yeux du sénat, aux yeux de l' empereur.

Ըզսըրբազան բնութեանըն դրոշմ ջընջել երբէք չէր հընար .
Է եւ յիս սիրտ գորովալիր զոր հարկանես կարեվէր .
Քեզ ձայնակցիմ արդ զապառումըդ կըշտամբել ըզվատշուէր :
Ով չարաբախտ դու Պոլիկտոս, դու միայն կաս խըստասիրտ,
Եւ դու միայն աններելի ջանաս առնել քեզ զոճիրդ .
Ի՞բր հանդուրժես զայդչափ արտօսր անթաց աչօք նըկատել .
Զիա՞րդ կարես առ այդչափ սէր ըզգութ սըրտի քո փակել .
Ո՞չ եւս աչաց քոց երեւին ոչ կողակից ոչ աներ ,
Ո՞չ եւս միոյն մըտերմութիւն եւ ոչ միւսոյն քաղցըր սէր .
Կամիս թերեւս ըզմեզ յաղերս անկեալ զոտիւքըդ քոյին ,
Զի հաճեսցիս այր եւ փեսայ վերակոչիլ վերըստին :

ՊՈԼԻԿՏՈՍ

Ո՛վ չարահնար լարեալ ինձ հաղբք եւ չարարուեստ որոգայթ :
Յետ փորձելոյ 'ի սպառնական սաստից 'ի գոռ զիս 'ի գայթ ,
Յետ չարամահ ըզնէարխոն ինձ ածելոյ 'ի տեսիլ,
Յետ ըզսիրոյ աղու հրապոյրս տալոյ ինձ յումպ 'ի թըմբիր ,
Յետ կեղծաւորըն ծարաւոյ աւազանին սըրբութեան՝
Աստուածայնոյ սիրոյն ընդդէմ զինուորելով ըզնոյն զայն ,
Միաբանեալ գայք յիմ վերայ . ո՛վ դըժոխոց ժանտ հընարք :
Առ 'ի տանել ըզմըրցանակ քանիցս յաղթել լիցէ հարկ :
Եւ մինչեւ ցե՞րբ յամէք տարտամք 'ի խորհըրդոցդ ընտրութիւն.
Օ՜ն, դուք ըզձերն առէք ընտրել. իմ է ընտրեալ վաղագոյն :
Ըզմին միայն պաշտեմ ես Տէր՝ տիեզերաց արարող,
Յորմէ սարսին երկինք ւերկիր , սանդարամետք կան 'ի դող .
Ըզմի Աստուած, որոյ սիրեալ ըզմեզ 'ի սէր անըսպառ՝
Զանարգանաց մահ վասըն մեր ինքնայօժար յանձն էառ ,
Եւ որ մեծի սիրոյն զեղման հրաշագործեալ յիշատակ՝
Որ ըստ օրէ հաճի տալ զանձն ընդ մեր մեղաց պատարագ :
Այլ ինձ զայնց մեղք են ձեզ ճառել, այլ ոչ կարէք դոլ հասու :
Իսկ որպիսեաց տեսէք ցնորից կայք դուք պաշտպանք զաչացու .
Ի զազրագործ ոճիրս անլուր նըշաւակէք ըզդիս ձեր .
Պատուհասեալք 'ի ձէնջ ոճիրք յերկինս համայն ունին տէր .
Պոռնիկն եւ շուն , առեւանգեալն եւ ազգապիղծ մըծղընեայն ,
Գողն , աւազակ , եւ որ ինչ այլ եւս գարշելիքն են համայն ,
Յանմահ 'ի դիս ձեր նախատիպ ունին իւրեանց օրինակ .
Զորոց մեհեանըն պըղծեցի , ըզագինս եդի հարթյատակ ,
Որ թէ եւ այժմ ինձ առաջի կային՝ ըզնոյն առնէի
Յայտ յանդիման քեզ Փելիքսի , եւ յանդիման Սեւերի ,
Եւ ծերակոյտ մեծ ատենին , դէմ յանդիման իսկ կայսեր :

FÉLIX

Enfin ma bonté cède à ma juste fureur :
Adore-les, ou meurs.

POLYEUCTE

Je suis chrétien.

FÉLIX

Impie!
Adore-les, te dis-je ; ou renonce à la vie.

POLYEUCTE

Je suis chrétien.

FÉLIX

Tu l' es? O coeur trop obstiné!
Soldats, exécutez l' ordre que j' ai donné.

PAULINE

Où le conduisez-vous ?

FÉLIX

A la mort.

POLYEUCTE

A la gloire.
Chère Pauline, adieu ; conservez ma mémoire.

PAULINE

Je te suivrai partout, et mourrai si tu meurs.

POLYEUCTE

Ne suivez point mes pas, ou quittez vos erreurs.

FÉLIX

Qu' on l' ôte de mes yeux, et que l' on m' obéisse.
Puisqu' il aime à périr, je consens qu' il périsse.

ՓԵԼԻՔՍ

Արդար ցասման խնում ոչ եւս արդ ժուժեն կամք մարդասէր.
Նոցին պաշտօն տար, կամ մեռիր:

ՊՈԼԻԿՏՈՍ

Քրիստոնեայ եմ:

ՓԵԼԻՔՍ

Անօրէն.
Քեզ ասեմ՝ դիցըն պագ երկիր, թէ ոչ ընտրես մահ քեզէն:

ՊՈԼԻԿՏՈՍ

Քրիստոնեայ եմ:

ՓԵԼԻՔՍ

Քրիստոնեա՞յ ես. ով խըստասիրտ դու յամառ:
Ո՜ն, զօրականք, ածէք զաւեալդ յինէն հրաման 'ի կատար:

ՊԱՒԼԻՆԷ

Յո՞ գնա տանիք:

ՓԵԼԻՔՍ

Ի մահ:

ՊՈԼԻԿՏՈՍ

Ի փառս: Ով Պաւլինէ սիրելի,
Ողջամբ կացջիր, եւ զյիշատակս անջինջ կալցիս 'ի սըրտի:

ՊԱՒԼԻՆԷ

Եկից ընդ քեզ ուր եւ երթաս, եւ 'ի մահ իսկ՝ թէ մեռցիս:

ՊՈԼԻԿՏՈՍ

Կաց, մի ընդ իս գար, եւ կամ թող 'ի բաց ըզդիս քո մոլորս:

ՓԵԼԻՔՍ

Առէք ըզդա յաչաց 'ի բաց, լըցցին հրամանք իմ 'ի դա:
Զի ընդ կորուստ իւր կամեցաւ, գըտցէ զկորուստ իւր ապա:

SCÈNE IV.

FÉLIX, ALBIN.

FÉLIX

Je me fais violence, Albin, mais je l'ai dû ;
Ma bonté naturelle aisément m'eût perdu.
Que la rage du peuple à présent se déploie,
Que Sévère en fureur tonne, éclate, foudroie,
M'étant fait cet effort, j'ai fait ma sûreté.
Mais n'es-tu point surpris de cette dureté?
Vois-tu comme le sien des coeurs impénétrables,
Ou des impiétés à ce point exécrables ?
Du moins j'ai satisfait mon esprit affligé :
Pour amollir son coeur je n'ai rien négligé ;
J'ai feint même à tes yeux des lâchetés extrêmes :
Et certes, sans l'horreur de ses derniers blasphèmes,
Qui m'ont rempli soudain de colère et d'effroi,
J'aurais eu de la peine à triompher de moi.

ALBIN

Vous maudirez peut-être un jour cette victoire,
Qui tient je ne sais quoi d'une action trop noire,
Indigne de Félix, indigne d'un Romain,
Répandant votre sang par votre propre main.

FÉLIX

Ainsi l'ont autrefois versé Brute et Manlie ;
Mais leur gloire en a crû, loin d'en être affaiblie ;
Et quand nos vieux héros avaient de mauvais sang,
Ils eussent, pour le perdre, ouvert leur propre flanc.

ALBIN

Votre ardeur vous séduit ; mais, quoi qu'elle vous die,
Quand vous la sentirez une fois refroidie,
Quand vous verrez Pauline, et que son désespoir
Par ses pleurs et ses cris saura vous émouvoir...

ՏԵՍԻԼ Դ.

ՓԵԼԻՔՍ, ԱԼԲԻՆՈՍ

ՓԵԼԻՔՍ

Բուռն են ինձ իղձք, Ալբինէ, այլ զայդ առնել ինձ հարկ էր,
Զի հեզութիւնն իմ ընդակից մի 'ի կորուստ ինձ յանգէր:
Թող զայրագնի արդ դըժկամակ կատաղութիւն խուժանին,
Թող Սեւերոս ոսոխընդոստ փայլատակէ մոլեգին,
Բուռն արարեալ անձին՝ հանի յաներկեւան զիս յանդորր:
Սակայն դու ո՛չ յապուշ կըրթիս ընդ խըստութիւնս անսովոր.
Է՞ քո տեսեալ քան զՊօլիկտեայ սիրտ անթափանց խորհըրդոց,
Կամ ամպարիշտ քան ըզնորայն արհամարհոտ աստուածոց:
Արդ հանգուցի գէթ զալեծուփ սիրտս 'ի հոգոց վերահաս,
Եւ յամփել ըզպալացեալըն չարարի ինչ պակաս.
Տեսե՞ր իսկ յոր վատութիւն յանձն առի կեղծեօք խոնարհել.
Եւ եթէ ոչ նորա վերջին հայհոյութեանցըն ժայթքել
Ընդ արհաւիրըս գըրգռէլն յիս եւ զայրոյթ յեղակարծ,
Բուռն էր ինձ մարտն եւ յաղթութիւն իմ կարի յոյժ կեղակարծ:

ԱԼԲԻՆՈՍ

Այլ զըղջասցիս ընդ յաղթութիւդ, արասցես զայն դատապարտ.
Է ինչ 'ի նմա՝ ոչ գիտեմ զինչ՝ ազդեցութիւն ապիրատ,
Դըժպատեհ առն հռոմայեցւոյ եւ Փելիքսի անարժան
Ինքնին ըզքոյդ անգութ ձեռամբ հեղուլ զարիւն սեփական:

ՓԵԼԻՔՍ

Ըզնոյն երբեմն եւ Մանլիոս, ըզնոյն Բրուտոս արարին,
Եւ փառք նոցա ոչ ինչ նուազեալ՝ եւ եւս այնուիկ աճեցին.
Եւ դիւցազունք մեր հինք՝ թէ գոյր նոցա արիւն պիղծ յերակ,
Ինքնին զիւրեանց բանային կողս առ 'ի հեղուլ զայն երագ:

ԱԼԲԻՆՈՍ

Բուռն եռանդեամբդ արդ դու մոլեալ՝ կալցիս որպէս եւ կամիս.
Սակայն 'ի կրիցըդ թողանալ, յորոց խռովեալ այժմ յուզիս,
Երբ զառաջնեաւ ըզՊաւլինէ տեսցես 'ի սուգ յուսահատ,
Ցարտասուր աչաց նորին ու 'ի ճիչ հարեալ յոգի ինքնադատ...

FÉLIX

Tu me fais souvenir qu' elle a suivi ce traître,
Et que ce désespoir qu' elle fera paraître
De mes commandements pourra troubler l' effet :
Va donc, cours y mettre ordre, et voir ce qu' elle fait ;
Romps ce que ses douleurs y donneraient d' obstacle ;
Tire-la, si tu peux, de ce triste spectacle ;
Tâche à la consoler. Va donc ; qui te retient ?

ALBIN

Il n' en est pas besoin, seigneur ; elle revient.

SCÈNE V.

FÉLIX, PAULINE, ALBIN.

PAULINE

Père barbare, achève, achève ton ouvrage ;
Cette seconde hostie est digne de ta rage :
Joins ta fille à ton gendre ; ose : que tardes-tu ?
Tu vois le même crime, ou la même vertu :
Ta barbarie en elle a les mêmes matières.
Mon époux en mourant m' a laissé ses lumières ;
Son sang, dont tes bourreaux viennent de me couvrir,
M' a dessillé les yeux, et me les vient d' ouvrir.
Je vois, je sais, je crois, je suis désabusée :
De ce bienheureux sang tu me vois baptisée ;
Je suis chrétienne enfin, n' est-ce point assez dit ?
Conserve en me perdant ton rang et ton crédit ;
Redoute l' empereur, appréhende Sévère :
Si tu ne veux périr, ma perte est nécessaire ;
Polyeucte m' appelle à cet heureux trépas ;
Je vois Néarque et lui qui me tendent les bras.
Mène, mène-moi voir tes dieux que je déteste ;
Ils n' en ont brisé qu' un, je briserai le reste.
On m' y verra braver tout ce que vous craignez,
Ces foudres impuissants qu' en leurs mains vous peignez ;

ՓԵԼԻՔՍ

Բանքդ ինձ 'ի յուշ ածեն զի նա մահապարտին գնաց ըզհետ.
Անդ 'ի տեսիլ իւր յուսահատ եւ 'ի կական դառնաղէտ
Ըզհրամանացն իմոց զարդիւնըս վեր 'ի վայր շըրջեսցէ:
Ո՜ն դու ըլացիր ապա 'ի վայր անդըր դիտել զինչ գործէ.
Տես զի մի ցաւքն աղխողորմ արկցեն գործոյն ինչ խափան.
Մի՛ զնա թողուր՝ եթէ կարես՝ կալ յայն ողխուր տեսարան.
Ջանա սփոփել ըզնա: Արի երթ օ՛ն, եւ զի՞ յապաղես:

ԱԼԲԻՆՈՍ

Գնալոյ իմոյ չէն ինչ պէտք, տէր. ահա ինքնին գայ առ քեզ:

ՏԵՍԻԼ Ե.

ՓԵԼԻՔՍ, ՊԱՒԼԻՆԷ, ԱԼԲԻՆՈՍ

ՊԱՒԼԻՆԷ

Խուժադուժ հայր, տուր դու, աղէ, տուր կատարումըն գործոյդ.
Երկրորդ ահա սպանդ արժանի մոլեգնութեան քո անգութ.
Ընդ փեսայիդ խառնեա 'նդ արեան եւ ըզդըստեր քո. զի՞ կաս.
Ոճիր նորա կամ բարութիւն գըրացէ եւ յիս պատուհաս.
Խըժդըժութիւն քոյին ըզնոյն գտանէ եւ յիս ըզպատճառ:
Ինձ ամուսինն իմ 'ի մահուն ծագեաց ըզլոյս իւր պայծառ.
Արիւն նորա ցայտեալ զինեւ 'ի սուսերաց քոց դահճաց,
Ըզմութ յինէն մերժեալ՝ 'ի լոյսն անըստուեր զաչս իմ եբաց.
Ես տեսանեմ արդ եւ գիտեմ, եւ չհաւատամ 'ի նանիր.
Երանելեաւն արեամբ արդէն իսկ մըկըրտեալ զիս ծանիր.
Գիտա, հակիրճ, զի քրիստոնեայ եմ, եւ չիցէ՞ բաւական:
Հապա կորո զիս եւ պահեա զհամբաւդ եւ զբարձր աստիճան.
Ինքնակալին քում ակն ածջիր, երկիր յահէ Սեւերեայ.
Թէ ընդ կորուստ քո ոչ կամիս, կորուստ իմ հարկ է՝ գիտես:
Ինձ Պողիկտոս փողէ հրաւէր յիւրն երջանիկ կատարած,
Եւ Նէարխոս 'ի միասին բազկօք առ իս կան տարած:
Տար զիս, աղէ, առ դիս քո տար եւ զգարշելիսըն ցոյց ինձ.
Նոցա ըզմին կործան արկեալ, զայլս համօրէն ես արկից:
Ցուցից թէ իբր արհամարհեմ յորոց լինիքդ ահարեկ,
Զանզօր շանթիւն յոր ըզնոցին աջ 'ի պատկերսըն զինէք.

Et, saintement rebelle aux lois de la naissance,
Une fois envers toi manquer d' obéissance.
Ce n'est point ma douleur que par là je fais voir;
C' est la grâce qui parle, et non le désespoir.
Le faut-il dire encor, Félix? je suis chrétienne;
Affermis par ma mort ta fortune et la mienne;
Le coup à l' un et l' autre en sera précieux,
Puisqu' il t' assure en terre en m' élevant aux cieux.

SCÈNE VI.

FÉLIX, SÉVÈRE, PAULINE, ALBIN, FABIAN.

SÉVÈRE

Père dénaturé, malheureux politique,
Esclave ambitieux d' une peur chimérique,
Polyeucte est donc mort! et par vos cruautés
Vous pensez conserver vos tristes dignités!
La faveur que pour lui je vous avais offerte,
Au lieu de le sauver, précipite sa perte!
J' ai prié, menacé, mais sans vous émouvoir;
Eh vous m' avez cru fourbe, ou de peu de pouvoir!
Hé bien! à vos dépens vous verrez que Sévère
Ne se vante jamais que de ce qu' il peut faire;
Et par votre ruine il vous fera juger
Que qui peut bien vous perdre eût pu vous protéger.
Continuez aux dieux ce service fidèle;
Par de telles horreurs montrez-leur votre zèle.
Adieu; mais quand l' orage éclatera sur vous,
Ne doutez point du bras dont partiront les coups.

FÉLIX

Arrêtez-vous, seigneur, et d' une âme apaisée
Souffrez que je vous livre une vengeance aisée.
Ne me reprochez plus que par mes cruautés
Je tâche à conserver mes tristes dignités;
Je dépose à vos pieds l' éclat de leur faux lustre.

Եւ սրբազան հաւատութեամբ իբր յորդիական ՚ի պարտեաց՝
Զայս մի անգամ եւեթ հեստեմ հայրենի քոց հրամանաց:
Ոչ այս ցաւոց եւ յուսահատ սրտի են խօսք յայտարար ,
Այլ երկնաւոր շնորհաց՝ որ այժմ ազդեն ՚ի յիս՝ է բարբառ .
Եւ թէ կըրկին լսել կամիս , եմ իսկ եւ եմ քրիստոնեայ .
Մահուամբ խնով զիս եւ ըզքո կացո ըզբաղդ աներկբայ .
Երկաքանչիւր մեզ կենարար լիցի միայն այն հարուած ,
Ըզքեզ յերկրի յապահովեալ, զիս ՚ի կամարս աստեղաց :

ՏԵՍԻԼ Զ.

ՓԵԼԻՔՍ , ՍԵՒԵՐՈՍ , ՊԱՒԼԻՆԷ , ԱԼԲԻՆՈՍ , ՓԱԲԻՄՆՈՍ

ՍԵՒԵՐՈՍ

Գաղան վայրագ , ծընող անգութ , քաղաքավար վատչըւէր ,
Ի ցնորական ահէ գերեալ բարուկ անարգ փառասէր ,
Կորեաւ ուրեմըն Պօլիկտոս . եւ երազեա դու անձին
Անգըթութեամբդ յաւերժանալ յամօթապարտ քում բարձին:
Զի բարեխօս վասըն նորա կացի ըզկեանան ՚ի փըրկել,
Փոխան կենաց դու ՚նդ հակառակն ըզմահ նորուն ճեպեցեր .
Աղերս արկի եւ սպառնացայ , այլ դու անշարժ սալացեալ՝
Համարեցար զիս խորամանկ , կամ դոյզն ինչ ոք ապիկար :
Քաջ է , ուսցիս ապա միասուք անձին ՚ի խրատ զի Սեւեր
Ոչ ՚ի մտոտիս պանծայ , այլ յայն որ չէ քան զկար իւր ՚ի վեր .
Եւ կորըստեամբ քո խելամուտ լիցիս քեզէն ճանաչել
Զի որ գիտէն կորուսանել, նոյն եւ կարող էր փըրկել:
Այդպէս յաւէրժ դիցն ՚ի պաշտօն հաւատարիմ լեր եւ փոյթ ,
Եւ եղեռամբքըդ ստակալի հանդէս արա նախանձուդ :
Ողջամբ կացջիր , այլ ՚ի ճայթել ըզքեւ ահեղ մըրըրկին ,
Կանխածանօթ լիցէ քեզ աջն ուստի հարուածքըն եկին :

ՓԵԼԻՔՍ

Անսա ինձ , տէր , եւ անվըրդով սրտիւ ներել ինձ հաճեաց
Զի կամակար վրէժ հեշտընկալ քեզ հատուցից փոխադարձ :
Մի եւս այլ զիս կըշտամբեսցես զի ես յեղեան ՚ի յանգութ
Գուն գործիցեմ կալ ՚ի Թըշուառ իշխանութիւնս իմ անքոյթ .
Ըզսին փառաց նոցին փաղփիւն առ ոտըս քո արկանեմ,

Celle où j' ose aspirer est d' un rang plus illustre;
Je m' y trouve forcé par un secret appas;
Je cède à des transports que je ne connais pas;
Et, par un mouvement que je ne puis entendre,
De ma fureur je passe au zèle de mon gendre.
C' est lui, n' en doutez point, dont le sang innocent
Pour son persécuteur prie un Dieu tout-puissant;
Son amour épandu sur toute la famille
Tire après lui le père aussi bien que la fille.
J' en ai fait un martyr, sa mort me fait chrétien:
J' ai fait tout son bonheur, il veut faire le mien.
C' est ainsi qu' un chrétien se venge et se courrouce:
Heureuse cruauté dont la suite est si douce!
Donne la main, Pauline. Apportez des liens;
Immolez à vos dieux ces deux nouveaux chrétiens.
Je le suis, elle l' est; suivez votre colère.

PAULINE

Qu' heureusement enfin je retrouve mon père!
Cet heureux changement rend mon bonheur parfait.

FÉLIX

Ma fille, il n' appartient qu' à la main qui le fait.

SÉVÈRE

Qui ne serait touché d' un si tendre spectacle!
De pareils changements ne vont point sans miracle.
Sans doute vos chrétiens, qu' on persécute en vain,
Ont quelque chose en eux qui surpasse l' humain;
Ils mènent une vie avec tant d' innocence,
Que le ciel leur en doit quelque reconnaissance:
Se relever plus forts, plus ils sont abattus,
N' est pas aussi l' effet des communes vertus.
Je les aimai toujours, quoi qu' on m' en ait pu dire;
Je n' en vois point mourir que mon coeur n' en soupire;
Et peut-être qu' un jour je les connaîtrai mieux.
J' approuve cependant que chacun ait ses dieux,
Qu' il les serve à sa mode, et sans peur de la peine.
Si vous êtes chrétien, ne craignez plus ma haine;
Je les aime, Félix, et de leur protecteur
Je n' en veux pas sur vous faire un persécuteur.

Գերագունից քան ըղձոսին վառեալ փառաց յիղձ վըսեմ.
Ախորժ զանխուլ բըռնազբօսեալ եւ հրապուրէ զիս 'ի նոյն ,
Եւ յանձանօթ յուզեալ 'ի կրից գտանիմ ընկճեալ եւ նըկուն .
Յեղափոխեալ՝ ոչ գիտեմ իբր՝ յանհրեւոյթ իմն ազդմանց ,
Ի ցասմանէ՝ 'ի փեսային իմոյ բերիմ 'ի նախանձ :
Նորին արիւն է տարապարտ հեղեալ , գիտեմ աներկբայ ,
Որ առ Աստուած հըզօր յաղերս վասն հալածչաց իւրոց կայ .
Խանդակաթ սէր Նորին եւ գութ առ ընտանիսն համասփիւռ.
Դըստերն 'ի զոյգ եւ զհայրն ինքնին առեալ ձըգէ ըզհետ իւր .
Վըկայ ինեւ կացեալ , արար մահուամըբն զիս քրիստոնեայ .
Երանացեալ ինեւ , եւ զնոյն երանութիւն ինձ ցանկայ :
Այս է ցանուլ քրիստոնէի , այսպէս խընդրէ նա զիւր վրէժ .
Ո՛վ երջանիկ անդրըթութիւն , ոյր արգասիք՝ կեանք յաւէժ :
Բեր , Պաւլինէ , մատո զբաղուկս . առէք մեզ այսր ըզշըղթայս .
Դից ձեր 'ի սպանդ զենէք երկուս նորընծայեալ քրիստոնեայս :
Քրիստոնեայք եմք . թափեա զցասումըն քո 'ի յիս եւ 'ի նա :

ՊԱՒԼԻՆԷ

Դէպք բարեբաղդ . անակընկալ հայրն իմ առ իս արդ դառնայ :
Զուրախութիւն իմ պըսակէ այս փոփոխումն երջանիկ :

ՓԵԼԻՔՍ

Դուստր իմ , պարգեւք են այդ աջոյն որ ներգործէ զայսոսիկ :

ՍԵՒԵՐՈՍ

Ի տեսարանս յայս գըթալի ո՞յր անընդոստ կան ոգիք :
Այսպէս դիպաց յեղափոխել հրաշից են միշտ արգասիք .
Քրիստոնէից , որոց ընդդէմ զուր հալածչաց ճըգնի ջան ,
Է ինչ անշուշտ գեր 'ի վերոյ քան ըզբնութիւնըս մարդկան .
Ամբիծ վարուքն արժանաւորք լինին յերկնից առնուլ վարձ .
Չէ հասարակ առաքինեաց յընկճելըն զօլ վերամբարձ :
Զինչ եւ զնոցունց ասիցեն այլք՝ ինձ սիրելիք միշտ թըւին .
Ի տեսանել ըզմահ նոցունց աղէտք 'ի սիրտ իմ յուզին :
Տեղեկագոյնս իսկ ըղձոսին արդեօք երբեմըն ծանեայց .
Բայց արդ կալցի իւրաքանչիւր ըզ զո՛ր կամի իւր աստուած ,
Եւ աներկիւղ նըմա պաշտօն տարցի 'ստ հաճոյս համարձակ :
Թէ քրիստոնեայք էք դուք , մի՛ եւս յիմոց վըխտուցըս խիթայք.
Նոքա սիրունք են ինձ , Փելիքս , եւ դէպք կարի անընդել,
Զի որոց ցարդ կացի պաշտպան , 'ի քեզ առից հալածել:
Կացցես 'ի քում իշխանութեն , զօրէնս պատուոյդ առ քեզ կալ.
Հաւատարիմ լեր Աստուծոյդ եւ առ տէր մեր ինքնակալ:

Gardez votre pouvoir, reprenez-en la marque;
Servez bien votre Dieu, servez notre monarque.
Je perdrai mon crédit envers sa majesté,
Ou vous verrez finir cette sévérité:
Par cette injuste haine il se fait trop d'outrage.

FÉLIX

Daigne le ciel en vous achever son ouvrage,
Et, pour vous rendre un jour ce que vous méritez,
Vous inspirer bientôt toutes ses vérités!
Nous autres, bénissons notre heureuse aventure:
Allons à nos martyrs donner la sépulture,
Baiser leurs corps sacrés, les mettre en digne lieu,
Et faire retentir partout le nom de Dieu.

Մերժեալ անկայց ես յերեսաց կայսեր մեծին Դեկոսի ,
կամ դըժպատեհըն խըստութեան ընդ հուպ վախճան եղիցի .
Զի անիրաւ խըժդըժութեամըն ածէ զիւրեւ նա մըթար :

ՓԵԼԻՔՍ

Հաճեացի Տէր զոր ըսկըսաւն 'ի քեզ ածել 'ի կատար .
Եւ զի 'նկալցիս յաւուր միում զքո արժանեաց փոխարէն ,
Ճըշմարտութեանըն ճառագայթք այժմէն 'ի քեզ ծագեսցեն :
Այլ մեք մեծի գեղանըսեհ բաղդիս եղեալ մասնակից ,
Ո՛ն երթիցուք օրհներգութեամբ յուղարկ նորոգըս վկայից ,
Տալ փայելուչ հանգիստ սըրբոց նըշխարաց ջերմ 'ի համբոյր ,
Եւ զԱստուծոյ հըռչակ հարցուք զանունն յաշխարհ ընդհանուր :

6ou.

2113 200

2013

8